

Նմանիլ Հայկազնին Տիգրան,  
Որ յունաց յաղթող գրաւ  
Եւ սկիւթացոց հիւսիսական,  
Որոյ ի դիմի հարաւ:  
Քուրդըն մեծ՝ վիշապ Ածդահան:  
ՆԵՐՍԵՍ ՍՈՎԱՏԻ

# Այունյաց երկիր

www.syuniacyerkir.am



Մեկիք Հայկազն 2-րդ. Օգոստոսյանի ճանաչումը՝ Ռուբեն Կամոյանի, կտավ, յուղաներկ, 100x90, 2013թ., պատվերը՝ «Այունյաց երկիր»:

## Խմբագրական Մեկիք Հայկազն 2-րդ. այր հզոր եւ դյուցազնական, իշխան երկրիս ու պանծալի անուն

«Այունյաց երկիրը» սկսում է հրապարակումների շարք՝ նվիրված Այունիքի նշանավոր մելիքներին ու մելիքական տներին: Եվ սկսում ենք մեր երկրամասի ամենանշանավոր մելիքներից մեկի՝ Այունյաց աշխարհի մի հատվածի (Քաշաթաղ-Փոքր Այունիք, Աղահեճք-Քաշաթաղ, Քաշաթաղ-Խանածախ, Քաշաթաղ-Չազեձոր անվանումներով) ինքնիշխանության արժանապատիվ կրող Մեկիք Հայկազն 2-րդին նվիրված նյութերի մատուցմամբ:

Հատկապես Արեւելյան Հայաստանի եւ մասնավորապես Այունիքի ու Արցախի ուշ միջնադարյան երեք-չորս դարերի (XV-XVIIIդդ.) պատմությունը հնարավոր է պատկերացնել առանց մելիքությունների: Հայկական պետականության վերացումից, Օսմանյան Թուրքիայի եւ Սեֆյան Իրանի միջեւ Հայաստանի 1555թ. բաժանումից

(Ամասիայի պայմանագիր) ու 1639թ. վերաբաժանումից (Կասրե-Շիրինի պայմանագիր) հետո ստեղծված պայմաններում հայկական մի շարք մանր իշխանությունների, ինչպիսիք մելիքություններն էին, հաջողվեց պահպանել հայկական ինքնավարությունն ու իրենց կիսանկախ գոյությունը: Կարելի է ստույգ ասել, որ մելիքություններն

ամբողջ միջնադարում կարողացան դիմակայել օտար նվաճողներին եւ պահպանել քաղաքական ինքնավարություն, մի քանի դար շարունակ լինել ազատագրական պայքարի, հայ ոգու եւ հայկականության պահպանության պատվարն ու դրոշակակիրը:

Շարունակությունը՝ էջ 5

# Խանածափ



■ Խանածափ գյուղը, որ մեկիքուսյան կենտրոնավայրը դարձավ Մելիք Չայկազն 2-րդի հոր՝ Մելիք Չախնազարի օրերուն: Այդտեղ է ծնվել Մելիք Չայկազն 2-րդը:

■ ■ Մելիք Չայկազն 2-րդի ապարանքը Խանածափում (որոշ վերակառուցումներով պահպանվում է մինչև հիմա):

■ ■ ■ Խանածափ: Մելիք Չայկազն 2-րդի մատուռ-դամբարանը:

■ ■ ■ ■ Մելիք Չայկազն 2-րդի նախածեռնությանը Խանածափում կառուցված սբ Չոփսիմե եկեղեցին (ծախից՝ եկեղեցու գավիթը):





# Հարանց մեծ անապատ սկզբնապարճառ հայոց նյուս մենաստրանների



■ Հարանց մեծ անապատ գտնվում է Հալիձոր գյուղից մոտ 5 կմ հեռու՝ Որոտան գետի աջ ափին, լեռնալանջի հարթության վրա: Անապատը բաղկացած է մի եկեղեցուց եւ գավթից, որոնց շուրջը խցերի եւ այլ շենքերի ավերակներ կան: Այդ բոլորը շրջապատված են պարսպով: Անապատից մի քիչ դեպի հյուսիս կա եւս մի մատուռ՝ Պողոս-Պետրոս անվամբ: Բոլոր շինությունները կառուցված են XVII դարում:



■ Անապատի եկեղեցու ներսում: Խորքում բեմն է՝ քանդված:

■ Անապատի գլխավոր մուտքը պահպանվում է մինչեւ հիմա:

■ Անապատից մի քիչ հյուսիս գտնվող մատուռ-եկեղեցին՝ Պողոս-Պետրոս անվամբ:

■ Անապատի մերձակա լեռը:

■ Անապատի եկեղեցու ներսում:



# Մելիք Չայկազն 2-րդ. այր հզոր եւ դյուցազնական, իշխան երկրիս ու պանծալի անուն



ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

### Սկզբը՝ էջ 1

Մելիքներ էին կոչվում բնիկ ազնվականության շառավիղներից բարձրացած եւ իրենց ենթակա տիրույթներում վարչական արտոնություններ ունեցող իշխանավորները: Սյունիքում հաճախ նաեւ շահի հրովարտակով էր հաստատվում մելիքական իրավունքը: Մելիքը միանձնյա իշխանական իրավունքներ ուներ իր տիրույթում, անձամբ էր լուծում հպատակների միջեւ ծագած վեճերը եւ կայացնում վճիռներ: Իբրեւ իշխանության վարչական ձեւ՝ մելիքները նաեւ զորք պահելու իրավունք ունեին: Արեւելյան Չայկաստանը Ռուսաստանին միացվելուց եւ մասնավորապես ռուսական կայսրությունում 1840թ. իրականացված վարչական ռեֆորմից հետո մելիքների վարչական ու դատական իրավունքներն աստիճանաբար վերացվեցին:

Իհարկե, մելիքությունները միշտ չէ, որ ունեցել են կայուն սահմաններ: Երբեմն նաեւ մելիքությունները վարչական ամբողջություն չեն կազմել: Եղել են նաեւ մելիքությունների վերացման եւ նոր մելիքությունների առաջացման դեպքեր: Այդ բոլորով հանդերձ՝ Սյունիքում եղել են մելիքական տներ ու մելիքություններ, որոնք բացառիկ կարեւոր դեր են խաղացել մեր երկրամասի պատմության ամենադժվարին ժամանակներում, որոնց վերաբերյալ պատմական հիշողությունն արթնացնելը եւ ազգային հիշողության հովիտներում նրանց բնակեցնելը ներկա սերնդի խնդիրներից ենք համարում:

Սյունիքի մելիքական նշանավոր տներից էին Օրբելյանները՝ հռչակավոր Օրբելյան տոհմի շարունակությունը (Տաթևի մելիքություն, որ մի ժամանակ ընդգրկում էր Ջանգեզուրի ամբողջ գավառակը), Մելիք Չայկազյանները (խանածախ-Քաշաթաղի մելիքություն, որն իր հզորության գագաթնակետին հասավ Մելիք Չայկազն 2-րդի օրերում): Մելիք Չայկազնի նախորդները Քաշաթաղ են տեղափոխվել XV դարի վերջին քառորդում: Եկել է Մելիք Չայկազնի պապը՝ Պարոն (իշխան) Չայկազը, ում կոչել են նաեւ Աղաջան: Այդ Չայկազը (Չայկազն 1-ինը), ըստ Մորուս Չարաթյանի, պատկանում է XIII դարից Արցախ-Ղարաբաղից Սյունիք (Վայոց ձոր) եւ Կոտայք թափանցած խաղբակ-Պոռոշյան իշխանական հին տոհմին:

Հիշարժան է, անշուշտ, Սիսիանի մելիքությունը՝ Մելիք Թանգյանների ու Մելիք Սաֆրազյանների առաջնորդությամբ: Վերջիններս բնիկ բռնակոթիցներ են, իսկ Մելիք Թանգյանները, ըստ որոշ աղբյուրների, Բռնակոթ բնակության են եկել Անիից: Տոհմի նախահայրը Մելիք Ստեփանն էր՝ Անիում զորապետության աստիճանի հասած:

Ղափանում ամենանշանավոր մելիքական գերդաստանը, իհարկե, Մելիք Փարսադանյաններն էին (գլխավորապես բնակվում էին Չալիծորում եւ Բեխում), ովքեր, ըստ որոշ աղբյուրների, ծագում են Բաղքի Չագինյան իշխանական տոհմից (վերջինս էլ՝ Սյունիների նախարարական տնից): Մելիք Փարսադանյաններից են սերում Մելիք Ստեփանյանները (Կապանի Առաջածո-

րում): Մեկ այլ վարկածի համաձայն Ղափանի Առաջածորի Մելիք Ստեփանյանները սերում են Արեւիք գավառի Կալերից: Ղափանում նշանավոր էին Մելիք Քարամյանները՝ սերված Դավիթբեկյան ժամանակների քաջարի զորավար Թորոսի թոռ Չեթունի որդի Քարամից (Թորոս իշխանը բնակվում էր Եղվարդում (ըստ Գրիշա Սմբատյանի՝ ներկայիս Ներքին Չանդի մերձակայքում գտնվող Խորձորում), Մելիք Քարամյանները՝ Ազարակում): Թորոս իշխանը, ինչպես վկայում է Երվանդ Լալայանը, «...գաղթած է եղել Սողանուից»: Արժանիկն էլ նստավայրն էր մելիքական մեկ այլ տան՝ Մելիք Փռանգուլյանների (Փռանգուլյանների), որի հայտնի ներկայացուցիչը Դավիթ Բեկի գլխավորած ազատագրական պատերազմի ժամանակ դավանափոխվեց եւ դավաճանաբար մեծ հարված հասցրեց պատերազմող հայկական բանակին: Այդուհանդերձ Մելիք-Ֆրանգուլի արարմունքը նորովի ուսումնասիրման եւ վերագնահատման կարիք ունի. դա մեզ հուշում է Նիկողայոս Ադոնցը: Ղափանում նշանավոր էին Մելիք Նուբարյանները (բնակվում էին Շիկահողում), որոնց ծագման վերաբերյալ հակասական կարծիքներ կան: Ըստ Երվանդ Լալայանի՝ գերդաստանը Մելիք Փարսադանյանների մի դստեր սերունդն է, ինչի հետ համաձայն չէ Կապանի մերօրյա պատմաբան Գրիշա Սմբատյանը: Ղափանում կային նաեւ փոքր մելիքական տներ, ինչպիսիք էին Մելիք Աղամիրյանները, Մելիք Ղուկասյանները, Մելիք Մուշկամբարյանները (վերջին գերդաստանն այստեղ է տեղափոխվել Իրանից՝ մինչեւ Թուրք-մենջայի պայմանագիրը, այնտեղ հակասություններ ունենալու պատճառով): Ըստ Ստեփան Լիսիցյանի՝ Քյուփարայի գավառակում (Ղափանի Ազարակի ենթաշրջան) եղել է մեկ ուրիշ Մելիք-Փարսադան: Իսկ ազերի Նազար Չեդարովն էլ գրել է («Ջանգեզուրի լեռներում»), որ Դոնդարլի եւ Դեմիրչիլեր (Ջանգեզուրի շրջան) գյուղերը պատկանել են ազարակցի Եփրեմ բեկ Աղախանովին (Կապանի Աղախանյանները, ըստ երեւույթին, մելիքական այդ տան շարունակությունն են):

Մեղրիում նշանավոր էին Մելիք Օհանջանյանները (տոհմի հիմնադիր Ղարազյոզ իշխանի հաջորդները 1819թ., շահի հետ ընդհարման պատճառով, տեղափոխվել են Սյունիք, նախ՝ Շիշկերտ, ապա՝ վերջնականապես հաստատվել Մեղրու Կալեր գյուղում), Մելիք Վաչյանները (ըստ Մեղրու մերօրյա պատմաբան Նաիրա Չայրապետյանի՝ Վաչյանները Դավիթ Բեկի Կոնստանտին գորավարի հաջորդներն են): Մեղրիում, անշուշտ, 18-րդ դարակազմի ամենանշանավոր իշխանը Պապ զորապետն էր՝ Կալերից, ում անարդարացիորեն գլխատեց Դավիթ Բեկը եւ ում հիշատակը հավերժացնելու մտադրություն ունենք Ռոբերտ Գրիգորյանի (Էջանանցու) հետ:

Գորիսում, Օրբելյաններից ու Չայկազյաններից բացի, հայտնի էին նաեւ Մելիք Չյունեիսյանները (այդ տոհմի ներկայացուցիչ Մանուշար բեկին էր վիճակված լինելու Գորիս քաղաքի հիմնադիրը 1870-ին), Մելիք Բարխուդարյանները (Տեղ գյուղում), Մելիք Փարսադանյանները (Խնձորեսկում):

Անշուշտ, մենք չենք հավակնում փոքրիկ այս հրապարակումով շատ թե քիչ ամբողջական տեղեկություններ հաղորդել Սյունիքի տարածքի բոլոր մելիքների ու մելիքական տների մասին: Մենք ընդամենը հիշեցնում ենք մելիքական առավել հայտնի տներին եւ ազդարարեցինք մեր մտադրությունը՝ ժամանակ առ ժամանակ (հաջորդաբար) ներկայացնել մելիքական տներից յուրաքանչյուրին, ինչը, ի վերջո, հնարավոր կդարձնի հետագայում ամբողջացնել Սյունիքի մելիքական տների պատմությունը: Ի դեպ, մելիքական տներից շատերի շառավիղներն այսօր էլ կան, եւ ակնկալում ենք նրանց արձագանքը:

Խմբագրության այդ մտադրության իրականացումը, ինչպես արդեն նշել ենք, սկսում ենք խանածախ-Քաշաթաղի մեծ



Խանածախ, Անապատի ձորը

մելիք, քաջարի զորավար ու դիվանագետ, հայ հոգեւոր-մշակութային կյանքում նշանակալի ավանդ ունեցած Մելիք Չայկազն 2-րդի՝ խոնարհումի արժանի կերպարը ներկայացնելով: Այդ հարցում մեզ քաջալերեցին եւ աջակցեցին նշանավոր սյունեցի, հայոց մերօրյա սպարապետ Սեյրան Օհանյանը, ինչպես եւ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, որոնց շնորհակալություն ենք հայտնում:

Համարի նախապատրաստման ընթացքում՝ 2012թ. դեկտեմբերի 7-ին, «Այունյաց երկիր» ստեղծագործական խումբն այցելեց Այունյաց մեծ անապատ եւ խանածախ: Սոսկալի էր տեսնել, որ Սյունյաց (Չալիծորի) մեծ անապատի չքնաղ եկեղեցու բեմը նույնպես զանձագործի պիղծ ծեռքով ավերվել է: Իսկ խանածախում շատ անշուք, կիսաքանդ վիճակում տեսանք Մեծ Չայկազն երկրորդի մատուռ-դամբարանը՝ տապանաքարն ու մատուռի երեսպատման սալիկները անհայտացած: Ինչպես վկայում է խանածախից Կարդան Թունանյանը, ում տնամերձում գտնվում է Մելիք Չայկազն երկրորդի դամբարանը, գյուղում քչերը գիտեն, որ հենց այստեղ է թաղված նշանավոր հայորդին: Մատուռ-դամբարանն էլ երկար տարիներ օգտագործվել է իբրեւ մարագ: Մելիք Չայկազն երկրորդի նախածեռնությամբ գյուղում կառուցված Սբ Չոփիսիմե եկեղեցին էլ խորհրդային տարիներին ներսից կտրտվել է պատերով՝ կոլտնտեսության պահեստի հարմարեցնելու նպատակով, եւ մինչեւ հիմա գտնվում է այդ վիճակում: Եկեղեցու արևելյան պատից (մինչեւ Մելիք Չայկազն երկրորդի դամբարան) տարածվում

է գերեզմանատուն, որն այսօր, ցավոք, աղբատեղի է: Տապանաքարերի մի մասն՝ իր բնական տեղից դուրս եկած, ընկած է աղբանոց դարձած այդ վայրում:

Օգտվելով Մելիք Չայկազն երկրորդին նվիրված հատուկ համար հրատարակելու պատեհությունից՝ կոչ ենք անում պատկան մարմիններին ու մեր երկրամասի պատմաշակութային վայրերի ու անշարժ հուշարձանների պահպանության հարցում նախածախնորի մարդկանց ու մեկենասներին՝ փրկելու Մեծն Չայկազի մատուռ-դամբարանը, փրկելու խանածախի Սբ Չոփիսիմե եկեղեցու մերձակայքի տապանատունը, որի արևելյան հատվածում իր հավերժական հանգիստն է գտել նշանավոր մելիքը: Ժամանակն է նաեւ պետական հոգածության տակ առնելու մելիքի խանածախյան ապարանքն ու ճանապարհ բացելու դեպի Սյունյաց (Չալիծորի) մեծ անապատ՝ Մելիք Չայկազն երկրորդի մեկենասությամբ կառուցված, որն ուշ միջնադարի հոգեւոր-մշակութային, շինարարական-ճարտարապետական գարթոնքի ազդակներից առաջինը եղավ հայոց մեջ:

Մելիք Չայկազն երկրորդի կատարած մեծագործությունների մասին թերթի սույն համարում ծավալուն տեղեկություններ են ներկայացվում: Դրանցից մեկը, այդ բոլորով հանդերձ, ուզում ենք ընդգծել. նաեւ Մելիք Չայկազնի հեղինակության եւ դիվանագիտության շնորհիվ Շահ Աբբասի հրամանով 17-րդ դարակազմին իրականացված հայոց գերեզմանատունը շրջանցեց (նաեւ Մելիք Չայկազն 2-րդի հեղինակության եւ դիվանագիտության շնորհիվ) Սյունիքի եւ Շարունակությունը՝ էջ 8

















ՄԱՂԱՔԻԱ ՕՐՄԱՆՅԱՆ

# Ազգապարում

ՀԱՏՎԱԾ

ՀԱՅԱՔԱՍԻ ԸՆԹԱՅԸ

Շահաբաս Պարսից թագաւոր, որ Օսմանեանց հետ 1590-ի հաշտութիւնը կնքեց ծանր պայմաններով, բայց իր տէրութիւնը զօրացնելու դիտմամբ («1570») իրօք ալ խղճի մտօք այդ նպատակին հետեւեցաւ, եւ հետզհետէ վերակազմեց Պարսկաստանի անկեալ վիճակը: Իր ձեռք առած միջոցներուն մէջ նշանաւոր էր՝ քրիստոնէից եւ յատկապէս Յայոց հանդէպ ցուցած բարեացակամութիւնը, որով ամէն տեսակ պաշտպանութիւն առատացուց անոնց, կրկին նպատակներով: Մէկը անոնց առեւտրական եւ արհեստագիտական յաջողակութիւններով իր երկիրը ճոխացնել եւ զօրացնել, եւ միւսը Յայերուն սիրտը իրեն կողմը շահելով՝ Օսմանեանց դէմ կատարելիք ձեռնարկին համար ազդեցիկ օգնականներ շահիլ: Այս ընթացքին արդիւնքն եղաւ, որ իշխանք եւ կողմնակալք, մահմետականք եւ քրիստոնէայք, հետզհետէ սկսան զաղթել Պարսից թագաւորութեան կողմը, զի թերեւս նոյնա դիրութիւն գտցեն զերծեալք ի ծառայութենէն Օսմանցուց (ԴԱՎ.8): Պատմիչը Սահմետականներէն յանուանէ կը յիշէ, Ղազի խան եւ Յայաթ բէկ Ուլամայօղլի Քուրդ ցեղապետները, որոնք Շահաբասի կողմը անցան, իսկ Կրացի իշխանագուններէն շատեր, Սիմոն խանի բանտարկութենէն եւ սպանութենէն ետքը Պարսկաստան ապաւինեցան: Պարսկաստան գաղթող Յայազգի իշխանագուններէն կը յիշուին Սարուխան բէկ եւ եղբայրը Նազար բէկ Ոսկանապատ գիւղէն, Օղլան քէշիշ եւ եղբայրը Ղուլու բէկ Յաթերք գիւղէն, Ջալալ բէկ եւ եղբորորդիները խաչէն գաւառէն, Սուչուս մելիք Դիզակ աւանէն, Փաշիկ մելիք Քօշիչ գիւղէն, Բաբէն մելիք Բրիտիս գիւղէն, Մելիքսէթ եպիսկոպոս Մելիքզատէ գիւղէն, եւ Յայկազն մելիք Խանստախ գիւղէն: Դիզակի գաւառէն՝ չորս գիւղեր միահաղոյն եւ Ագուլիս կամ Գողթն գաւառէն Դաշտ գիւղի ժողովուրդէն երեք մասն ալ խմբովին գաղթեցին, եւ Շահաբաս բոլոր եկողները սիրով կ'ընդունէր եւ կը բնակեցնէր Ասպահան (ԴԱՎ.9), որ իր մայրաքաղաքն էր ըրած, եւ կ'ուզէր շինցնել: Այսպէս հետզհետէ կը զօրանար պարսկասեր կողմը, եւ Դաւիթ եւ Մելիքսէթէ կաթողիկոսներն ալ սկսած էին Շահաբասի սիրելի ըլլալու ձեռք գործածել, վասն զի կը նախաստեւէին թէ Շահն հաւաստեալ գալոց է յաշխարհն Յայոց (ԴԱՎ.10):

ԱՄԵՏԻՍԻ ՎԱՆՃԱՆԸ

Թեպետ Մելիքսէթէ Ա.Գառնեցի պետական հրովարտակով կաթողիկոսութեան տէր էր եղած, այլ իր կանոնական կացութիւնը օգնական եւ աթոռակից ըլլալէ աւելի չէր, քանի որ բուն գահակալը Դաւիթ Դ.Վաղարշապատեցիին՝ իր դիրքը կը պահէր եւ իսկական կաթողիկոսն էր, Ասպահան քաղաքը: Թեպետ կայր ի բացեայ, այլ նոյն շրջանակին մէջ պաշտօն կը վարէր, եւ մնացածին համար իբր զգազան կապեալ ի գառնաբէրի, սպասէր եւ ըղծայր դիպող ժամու (ԴԱՎ.167): Իսկ միւս աթոռակիցն Աւետիս Ա. միշտ մոռցուած ու անյիշատակ կը մնայ Դավրիժեցիին պատմութեան մէջ, որ լիագոյն եւ հավատարմագոյն պատմիչն է, իսկ Դարանաղեցիին յիշատակները քաղողներ կը գրեն, թէ Երուսաղէմէ ետքը զազած է Էջմիածին, առանց յայտնելու թէ 1613-է քամի տարի ետքը, եւ անկէ Կրաստան, եւ թէ անդ եղել վախճան նորա 1620-ին (11. ԱՄՍ.69): Հակառակ ասոր նոյն Դարանաղեցիին իր Աստուածաշունչի յիշատակարանին մէջ (ԴԻՆ.) կը գրէ, թէ կատարեցաւ կատարումն գրոցս ի մեծ թվականիս Յայոց Ա. եւ Հ. եւ Ա., նոյնքեր ամսոյ է., եւ քաղոց Թ., ի հայրապետութեան Յայոց տեսնէ Տէր Աւետիսին, որ այժմ յաջորդէ զաբող Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, ուսկից կը հետեւի թէ 1622 նոյնքեր 7-ին չէր վախճանած, եւ ոչ թէ Կրաստան, այլ Էջմիածին կը գտնուէր: Յիշուած հռո-



մեական եւ հայկական ամասիները իրարու չեն համեմատիր, զի անշարժ տոմարով նոյնքեր 7, սահմի 29 է, իսկ շարժական տոմարով քաղոց 9, փետրուար 22 է, եւ պետք է անճշդութիւն վերագրել Դարանաղեցիին տոմարական սխալին: Իսկ Աւետիսի մասին վկայած ատեն ինքն իրեն կը հակասէ. եւ չենք գիտեր ինչ եզրակացութեան յանգիլ Աւետիսի գործունեութեան եւ վախճանի նկատմամբ: Քանաքեռցի պատմիչին անցողակի յիշատակութեան համեմատ, Աւետիս կը գտնուէր Երեւան, Ամիգունա խանին մօտ, երբ Մելիու բաբայ կամ բեռնակիր արեղայ կոչուած խաբեբային գործը կը քննուէր (ՉԱՔ.Ա.50): Թեպետ նա խաբեբան խայտառակեց, սակայն երբ գայն ջուրի մէջ խեղդելու վճիռ տուաւ Ամիրգունա, աղերսանօք կաթողիկոսին խաբեբան ազատեցաւ, եւ երբ սահմանէն հեռացուելու համար խաբեբան Քանաքեռ կը հանդիպող, կըսուի թէ էր անդ ի Քանաքեռ եւ կաթողիկոսն (ՉԱՔ.Ա.53): Սակայն այդ չափը չի բաւեր Աւետիսի Էջմիածին գտնուած տարին ճշդելու, վասնզի պատմիչը թուական չի նշանակել, իսկ Ամիրգունա շատ կանուխէն Երեւանի կուսակալ էր, 1604-ին Պարսի տիրապետութեան նորոգուելէն ի վեր: Հետեւապէս այդ կողմէն ալ պիտի չկարենանք Աւետիսի մահուան թուականը ճշդել: Միւս կողմէն լոյս մը կառնենք Մովսէս Տաթևացիի նամակէն, որ կը յիշուի Կեսարացիին Մելիքսէթէի գրուած յանդիմանագիրը, ուսկից օրինակ մը 1615 օգոստոս 27-ին Մեծ Անապատ է բերուէր, եւ կարդացուէր է սեպտեմբեր 19-ին, որ է Խաչի երեքշաբթին, Յայկազն իշխանի այնտեղ շինել տուած եկեղեցուն նաւակատիքին առթիւ: Այդ թուականին կըսուի թէ Աւետիսն կայ ի Էջմիածին եւ ասուիս զգեցեալ, որ է քսել կրօնաւորական ձեռք առած, եւ կը վկայուի թէ յերուսաղէմայ գալն փոքրիշատէ աստուածավախութիւն տեսաք ի նմա (11.ԱՄՍ 67), ինչ որ կը

ցուցնէ թէ առաջ շատ աստուածավախութիւն չունի եղեր: Ամէն առիթի մէջ, պետք է 1620 եւ 1624 տարիներու միջոցին մեռած կարծել, եւ աւելի հաւանաբար Էջմիածինի մէջ, ուր նորէն եկած եւ նստած պետք է ըլլայ, երբ Դաւիթ ու Մելիքսէթէ բացակայ կը գտնուէին: Աւետիսը ոչ իբրեւ գահակալ, այլ իբրեւ աթոռակից կաթողիկոս պիտի նկատուի, առանց բացատրել կարենալու թէ ինչու իր մասին այսչափ յամառ եւ

կան (ՀԱՅ.619): Հարկաւ Յայկազնի պաշտպանութեան շնորհիւ էր, որ Մելիքսէթէ երբ միւս վարդապետները կը հալածէր, Սարգիսի գործին չկրցաւ երբեք արգելք դնել: Անապատի աշակերտներուն մէջ նշանաւորագոյն եղաւ Ներսէս Մոկացի վարդապետը, Մոկք գաւառի Ասկնցաւ գիւղէն, Բեղլու մականունանալ, որ է Պեխաւոր, զի մեծ էր բեղն (ԴԱՎ. 30), յառաջագոյն Ամրուտլու Բարսեղ Գաւառցիին աշակերտած («1504»), եւ Անապատի մէջ ալ զարգանալէն ետք, պահ մը նոյնտեղ ուսուցչութիւն ըրած, եւ անկէ մեկնելով նոր անապատ մը հաստատած է Լիմ կղզիին մէջ, որ շատ բարգաւաճ եղաւ Ներսէսի առաջնորդութեան ներքեւ, իսկ անոր 1627-ին վախճանելէն ետքը իրեն յաջորդած է Ստեփանոս Մոկացի, նա ալ Անապատի աշակերտութենէն: Ստեփանոսի օրով Լիմայ միաբաններուն տարապայման աճելուն համար, մաս մը բաժանուած եւ Կոտուցի մէջ նոր անապատ մըն ալ հաստատած են (ԴԱՎ. 191): Անապատի միաբաններէն են նաեւ, Թովմաս Տաթևացի՝ որ ետքէն Շամախու վիճակին եպիսկոպոսն ու առաջնորդն է եղած, Կարապետ Վաղարշապատեցի եպիսկոպոսը՝ որ Էջմիածինէ վտարուելով Սեւան ապաւինած էր («1598») եւ անկէ Մեծ-Անապատ քաշուեցաւ. Արիստակէ Շամբեցի՝ որ Սարգիսի մահունէն ետքը Մեծ-Անապատին առաջնորդն եղավ. Արիստակէ Բարկուշատցի՝ որ Տանձափարախի անապատին հիմնադիրն ու առաջնորդն եղաւ. Դաւիթ Շամբոռեցի՝ Դարանաղեցի ազնուական տունէն՝ որ Չարեքազեթի Անապատը հիմնեց եւ վիճակին եպիսկոպոսն եղաւ. եւ այլք բազումք եւ յոյրք, որոնք այնու աւելի արդիւնաւոր եղան, որ Անապատին մէջ վարժուելէն ետքը, բարեկարգութեան գործը ընդարձակեցին, եւ յայլուրեք գնացեալ շինեցին անապատս եւ վանօրայս (ԴԱՎ.192):

1622. ԳՈՐԾԻՉՆԵՐՈՒ ՄԱՅԸ


Վարչական տեսակետէն Սարգիս Պարոնտըն էր Մեծ-Անապատին հոգեբարձու ի մարմնաւոր կողմանէ, եւ այս պաշտօնը իրեն վրայ մնաց մինչեւ իր մահը: Իսկ գրոց ուսուցիչ էին Կիրակոս Պոնտացի քահանան, որ միշտ տէր Կիրակոս կը կոչուի, եւ թեպետ այրի, բայց կերտի թէ վարդապետութեան աստիճան չէ առած, եւ Պօղոս Մոկացի, Մովսէս Տաթևացի, Ներսէս Մոկացի, ու Թովմաս Տաթևացի վարդապետները: Առաջին երեքը շրջուն կենաց ունէին, իսկ վերջին երկուքը բազում ժամանակս Արագիսի հետ մնալէ ետքը, Քշտաղք կամ Աղահեճք գաւառը քաշուեցան եւ Յօջանք գիւղի մօտ նոր անապատ մը բացին (ԴԱՎ. 198): Թէ Սարգիսի եւ թէ Կիրակոսի կենանք ու գործունեութիւնը միակերպ ձեւ, որ կը ստանան վանական շրջանցան եւ Յօջանք գիւղի մօտ մանրամասնութիւններ կը պակսին, եւ վախճանին ալ զրեթէ միաժամանակ տեղի կուճեայ մէկ տարուան միջոցին, թեպետ հայկական երկու տարեթիւերու մէջ, այսինքն է ՌԿԹ եւ ՌՀ, առաջինին վերջերը Սարգիս, եւ երկրորդին սկիզբները Կիրակոս (ԴԱՎ. 198): Աւելցնենք թէ Յայ թուականին նոր տարւոյն սկիզբը 1620 նոյնքեր 17-ին կիցար: Ներսէս Մոկացի իբրեւ նշանաւոր պարագայ մը կը յիշէ, թէ չորս կարգէ եղող Անապատի հիմնարկուները, իշխանն ընդ վարդապետ, հայրապետն եւ առանձնական, միեւնոյն ի հազար եւ եօթանասուն Յայոց թուին, այսինքն 1621-ին վախճանած են (ՀԱՅ.622): Յայրապետը Սարգիսն է, եւ առանձնականը Կիրակոս, զոր յիշեցինք, եւ իշխանն ալ Յայկազն Յայնազարեանն է, որուն վրայ խօսեցանք («1620»), եւ ուրիշ տեղեկութիւն չունինք աւելցնելու իր գործունեութեան եւ մահուան վրայ: Կը մնայ վարդապետը, որ է Պօղոս Մոկացի, զոր պարագայս սուրբ կը կոչէ Դավրիժեցի, իր օրինակելի վարքին, քարոզչական գործունեութեան, կրած հալածանքներուն եւ ի կենդանութեան եւ յետ մահուան հրաշագործութիւններուն համար, եւ որուն գործունեութենէն ինչինչ յիշատակներ («1615»), եւ 1618-ին Շահաբաս տուգանքի ենթարկուելով պատմեցինք («1616»): Միեւնոյն տարին Մելիքսէթէ ալ ազատութիւն ստացաւ Շահաբասէն, եւ կաթողիկոսութեան տիրացաւ 100 թուման տարեկան տուրքի պայմանով («1617»):

Ազգապարում, Բ հարդր  
Մայր արթոն Ս. Էջմիածին, 2001

# Աղահեճք

## ՀԱՏՎԱԾ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ «ՍԻՍԱԿԱՆ» ԳՐՔԻՑ, ԳԼՈՒԽ Զ

Ինչքան էլ որ, համաձայն տեղագրական տախտակների ցուցակագրության, ընդարձակ եւ, ըստ բնական պայմանների, գեղեցիկ է թվում այս գավառը, այնքան էլ անծանոթ է մնացել այժմ, կամ թերեւս հնուց անտի: Չեւտեղված է Այուճյաց աշխարհի հյուսիսարեւելյան կողմում, հյուսիսից եւ արեւելքից անջրպետող լեռներով սահմանակցում է Ծար եւ Ծղուկ գավառներին, հարավից՝ Հաբանդին: Այսուհանդերձ նրա տարածքը հստակ չէ. թվում է, թե ավարտվում է Հագարի մեծ գետի խանքով կամ արեւելքից, սրան պատշաճ է Սարգիս կաթողիկոսի խոսքը. «Աղահեճ, որի միջով անցնում է Աղավնո գետը՝ (հասնելով) մինչեւ Քաղավազին կամուրջը»(1), որովհետեւ, հիրավի, այնտեղից դեպ մերքեւ (հարավակողմում) նկատվում են Հաբանդի գյուղերը: Սա ցույց է տալիս, թե Հագար գետը նույնական է Աղվանք գետին, եւ անպատշաճ չէր այսպես անվանել այն Արցախին սահմանակցելու պատճառով, որը հնուց անտի մասն է համարվել Աղվանից աշխարհի, եւ հարկավ կաթողիկոսն այն հիշում էր իբրեւ գավառի գլխավոր գետ, եւ չկա սրանից ավելի մեծ գետ, որ գոյացել է բազում գետակներից, եւ համարյա հզորագույնն է Այուճյացի բոլոր գետերի մեջ, եւ ըստ այսմ տարբերվում է Այուճյացի Աղավնո գետից, որ հիշում է հին աշխարհագիրն, ու փնտրելի է այլ գավառում: Թերեւս, հետագայում կոչվեց Ագարակի գետ, ինչպես եւ գյուղն այս անունով անվանվեց Աղահեճք, որից էլ մինչեւ օրս Ագարու կամ Հագարի գետ է կոչվում: Եվ սա երեւելի ու ավելի տեսանելի էր գավառի բնական համապատկերի մեջ, քան այն մասը, որ հատում էր Հաբանդը, ուր աջից (արեւմուտքից) իր մեջ ընդունում է մյուս մեծ գետը՝ Որոտանը կամ Բարկուշատը, եւ միանալով ընթանում է դեպ հարավարեւելք եւ թափվում Երասխի մեջ Այուճյաց աշխարհի սահմանին կամ դրանից մի փոքր առաջ, որովհետեւ ստույգ չգիտեմ՝ նրա ստորին հովիտը՝ մասնավոր ձախակողմյանը, Այուճյացի՝ մասն էր, թե՛ Արցախի:



թողիկոսի վերոհիշյալ խոսքերը հաստատում են, թե Աղավնո գետն Աղահեճում է: Եվ դարձյալ, Քաղանիքը, որ Մյուս Բաղքն է, թեպետ եւ անտառավետ էր, բայց չեն երկիր էր, մինչդեռ Աղահեճը գրեթե չունի պատմական հիշատակներ, եւ բնական էր, որ այն պետք է անհարթ, մացառապատ եւ ամայի լիներ: Սակայն չնայած այսպիսին է, հարկ է, որ այդ տեղն եւ անհրաժեշտ պարանցի մեջ հաճելի եւ խիստ փափագելի լիներ բնակչության համար [օգտակար] համաձայն լեռների միաշար գոտիները՝ իրենց մեջ ունենալով անցուղի, դժվար հաղթահարելի նեղ կածաններ, իսկ երկրում, թեպետ քիչ չեն լեռները, բայց շատ բարձր չեն, եւ կարծես քիչ թվով որոշ լեռների բարձրությունը 7000 ոտնաչափ է, իսկ շատերինը՝ մոտ 6000 ոտնաչափ, ինչպես տեսնվում են իրենց տեղագրությունից:

Ինչպես երկրի բնությունն է այժմ, այնպես էլ այս գավառի պատմական անցյալը մնում է անհայտ: Հայտնի էլ չէ Աղահեճք կամ Աղահեճ անվան նշանակությունը: Այն գրվում է նաեւ հոգնակի եւ Բաղքի կամ Ծղուկի նման չի ենթադրվում իբրեւ Հայկազնական եւ Սիսական հին նահապետների անվանում, այլ ինչ-որ այլ նշանակություն ունի, եւ քանի որ Աղավնո գետը գրվում է նաեւ Աղունից ձեւով եւ նույն կերպով նաեւ գավառն է Աղահեճք [անվանվում] ենթադրվում է, թե այն [տեղանքի] աղային բնույթից է, եթե մեկին հաճելի չի թվում Աղվանքի Աղու նախահոր անունից [բխեցնել այն], քանզի Աղվանքը սրա հարեւանն է: Ինչպես գավառի հին անունն է իր ծագումով անծանոթ, նույնպես եւ երկրորդի անունը՝ Քաղանիք, ինչպես իր [պատմության] մեջ անվանում է Այուճյաց պատմիչը, իսկ հետագա դարերում աղավաղվելով կոչվում է Չտաղք, որի զուգակցությունը եւ նմանությունը Քաղանիքին ակնհայտ է, եւ ըստ այսմ՝ հետագայում երկրորդաբար կոչվում էր արեւելյան Բաղք: Այս գավառի Աղահեճ անվանը պատմիչն

ավելացնում է եւս մի անուն, այն է՝ Խոժոռաբերը: Սակայն տեղին է ասել, որ ոչ թե ամբողջ գավառը, այլ միայն նրա մի մասն էր այսպես անվանում եւ նույն մասը՝ Քաղանիք, գուցե երեք ձորահովիտով բաժանված երեք գետից յուրաքանչյուրի անունով են այդպես կոչվել, այսինքն՝ բնիկ Ագարի գետահովտինը՝ Աղահեճ, Հոջանցը՝ Քաղանիք, Արցախը՝ Խոժոռաբերը, որովհետեւ նույն հովտում գտնվում են վայրեր, որոնք հետագա դարերում արձանագրված են Քաղանի եւ Խոժոռաբերի գավառների կամ վիճակների անուններով, ինչպես կտեսնենք առաջիկայում: Մյուս գավառների նման Աղահեճի գեթ մեկ իշխան կամ տեր չի հիշված, գրեթե՝ եւ ոչ մի քաղաքական իրադարձություն, ինչը կասկածի տեղիք է տալիս, թե սա վաղ ժամանակներից օտարացել էր Այուճյաց տերերից եւ անցել Աղվանքի իշխանության եւ կամ մասնավոր այլազգիների բռնատիրության տակ, ովքեր ավերեցին ազգային հիշատակները եւ ձորահովիտների վայելչագեղ հմայքը: [Այդ բռնություններից] հիշվում է միայն արաբ ոստիկան Վիթի որդի Փատգոս կոչվածի արշավանքը 847թ., ով Գանձակի կողմերից գալով «Այուճյաց աշխարհը, շատերին գերեվարում է սահմաններում, գալիս իջնում է Աղահեճ գավառը՝ Արքունագետ կոչված մի ավան եւ իսկույն հրամայում է այրել եկեղեցին, որ անվանադրված էր սուրբ Գրիգորիկի անունով: Այդ ժամանակ Աստոն գործությունը հասնում է. ճերմակ ծիծիկ մի հեծյալ դուրս է գալիս եկեղեցուց բոլորի աջի առջեւ եւ ընթանում է դեպի բանակը: Այդ անօրեն մարդուն շփոթության մեջ է գցում բանակով հանդերձ եւ փախուստի է մատնում դեպի Եղջեր-Խոռ կոչվող սարը. այստեղ մի դաժան փոթորիկ մորկելով շրջապատում է նրանց, եւ միայն ձիերին ապավինած՝ փախչում, ազատվում են, իսկ բռնավորվածներն ու ավարը լեռների վրա անհայտացան, եւ գերվածներն Աստոն փառք տալով հանգիստ մնացին»: Սա համաձայն Կաղանկատվացու է (Գ, Ի) (3): Թե գավառի որ կողմում էր Արքունագետ ավանը, չեն

կարող ասել, որովհետեւ նշանակված չեն Հին ցուցակում, եւ ոչ էլ Եղջեր-Խոռ սարը, բայց հայտնի է, որ սա գավառի սահմանին, Արցախի սահմանին է:

Այուճյաց եկեղեցուն հարկատուների Ցուցակում դասակարգված գյուղերն այնպես են՝ սրանք.

Ավժեն	10
Անեժ	12
Տանձուտ	7
Հացյաց աղբյուր	12
Քեղածոր	10
Հակ	15
Արտագետ	12
Մեղի	12
Ականք	8
Արուական	6
Մշենի	6
Քաղաքաղք	6
Վերին շեն	6
Չիասար	6
Սատրակերտ	6
Մճնի	6
Հունչաք	12
Մարգ	10
Բողխոջոխ	10
Սուրբ Գեորգ	8
Լսորք	8
Ագարակու գետ	10
Շաբակի	7
Կարկատան	6
Բաղախանիք	12
Մոշենք	10
Որբորք քար	8
Արահուժ	6
Ծիծառնավանք	10
Կարոհորինք	12
Հայելյակ	6
Մախուլն	10
Խրու	8
Չորացիք	10
Խախտիք	12
Վժնաբերդ	12
Հայրի	8
Անուշավան	12
Աղտառ	6
Շամրթա	8
Արքո	6
Վասակակերտ	10
Ավարակ	12

Սրանց վրա ավելացնենք նաեւ վերջում հիշված Քաղաքաղի եւ Խոժոռաբերի 9 գյուղերը. Սթունիք, Աղվեսահազի, Եզնագունք, Փուլ, Սպիտակաջուր, Քարալուխ, Շրվական, Խոզնավար, Հալաքս, եւ թուրքամուն Դաշու, Աղջաքենդ, Յալուզդամ, Դուշչի, գուցե եւ սակավաթիվ այլ գյուղեր:

Տեղագրությունը սկսենք արեւմուտքից, որ մեզ հայտնի դարձավ Ծղուկ եւ Հաբանդ գավառների նախանկարագրությամբ, նաեւ Արցախ գետի հովտից, կամ Խոժոռաբերի տարածքից (սա համարելով այս հովտի մասը), սակայն գյուղերը, որ արձանագրված են նրա մեջ, մասամբ պատշաճում էին Հաբանդին: Չորահովտի գլուխը (որի հին անունը չգիտեմ, սակայն փառքով են այն անվանել Ծիծեռնավանքի կամ Խոժոռաբերի գետ), միջառահաման է երեք գավառի՝ Ծղուկի, Աղահեճի եւ Հաբանդի: Երկիրն անստույգ է, կամ ամայի, ինչպես արձանագրեցինք առաջին գավառի (Ծղուկ) տեղագրության մեջ, եւ հայտնի չէ՝ երեքից որի մեջ էր մտնում, կամ մասնավոր առաջին երկուսից (որի մեջ), որովհետեւ թեպետ ըստ ջրերի կուտակման (եթե ստույգ է տեղագրույց տախտակը) [այն] պատշաճում է Աղահեճին, սակայն վտակներից մեկի անունը Երեմես, որ հիշեցնում է Ծղուկի Երեմի գյուղը՝ գտնվելով նրա սահմանային թեկին, եւ անջրպետված լինելով Կարմիր լեռներով, որ կոչվում են մեծ Դզըլբողազ, Դզըլբողազ տերեսի (Կարմիր կապանի ձոր) 10370 բարձրությամբ, եւ Դզըլթեփե (Կարմիր սար)՝ 9700 [բարձրությամբ]: Վերջին երկուսի արանքում արեւելյան կողմից հոսում է այն վտակը՝ աջից եւ ձախից իր մեջ ընդունելով առուներ, ու միաձուլվելով գետի է վերածվում այլազգիների Միճբենտ (?) գյուղով, որ հավանաբար Աղահեճի Մճնի գյուղն է: Սրա հյուսիսում մոտ մեկ մղոնաչափ հեռու, առանձին մի սար կա, որ ըստ ուսումնասիրողների չափագրության 5900 բարձրություն ունի, ինչպես եւ հարավում դարձյալ կա առանձին մի սար 6150 [բարձրությամբ]: Սրա ստորոտին հոսող գետի աջ վտակի մոտ Ալատախի (?) աղավաղված անունով գյուղ կա, սակայն հնության

Ջարոնակությունը՝ էջ 16



տարածքը մինչև Ծիծառնավանք (Աղօղլան) աջից խիստ նեղ է: [Այստեղ] երկու կառույց է արձանագրված՝ [մեկը] Սուս անունով, որն ունի հնության նշաններ, բայց չի հիշատակված ցուցակներում, եւ մյուսը՝ Թաթաշուրան: Սրա արեւմտակողմում եւ Հոչանց գետի ձորեզրին կից համնում է 4675 բարձրությամբ բարտեզի վրա գրված Մարգիզ լեռնակը, որ ըստ իս կրում է Մարգբ անունը, ինչը Հին ցուցակում Մարգս է: Իսկ ծախակողմն ընդարձակ է, եւ նրա մեջ են թափվում Շուշիի արեւմտյան լեռներից հոսող վտակներ: Լեռնակողմի գլխավոր գյուղը 4480 բարձրության վրա գտնվող Գալետերեսին է, որ ըստ հայերի Բերդաձորն է, եւ թեպետ չի հիշված գրականության մեջ, բայց այսպես է կոչվում նաեւ մեր իսկ ժամանակներում, որ հայտնի է Միկենե Անգլիացու ճանապարհորդական հուշագրությունից, ով անցել է այդ գետակով, եւ աղավաղելով գրում է՝ Բարիանձոր, Pareanzour: Սահմանները խիստ անտառոտ են: Բերդաձորի հյուսիս-արեւմտյան սկզբնաստում բարձրանում է Լաչին լեռը՝ 5940 բարձրությամբ եւ հարավ-արեւելքից Շաղնաբար լեռը՝ 6460 բարձրությամբ: Գետերի գյուղերն են. Ավտալարը, Գըզնաջան, Գարալուլը, եւ արեւելյան կողմից գետերի խառնուրդին կպած են Շիվուտը, կամ Բաղրբեկլուն, որ Ջաբուխի հանդիպակաց կողմում է: Աղահեճի հին գյուղերի շարքում Մարգազ եւ Ագարակ գետի միջեւ կարդացինք Սբ Գեւորգ կոչվածը, որ ենթադրել է տալիս, թե բնակավայրի մոտ եղել է համանուն վանք(19), արդյոք նո՞ւյնն է, թե՞ ոչ, սակայն այս վայրերից ոչ հեռու, Արցախի սահմանին ծանոթ է Պտկի ս. Գեւորգ վանքը<sup>3\*</sup>: Կարծում են, թե սա է արձանագրված բարտեզի վրա եւ Ջալալյանի մոտ [հիշված] Պտկիսի բերք -ը, ուր, ասում է, թե ուխտով պատվում է ոմն Սուրբ Գեւորգի գերեզմանը<sup>4\*</sup>:

Երկու օժանդակ [գետերով] վարարած Ագար գետը համարյա անշեղորեն հոսում է հարավ՝ մինչև Բարկուշատի հետ խառնվելը՝ նրա հետ նեղացնելով գետամեջը, որի վերին կողմը մասն է Հաբանդ գավառի, ստորին մասը՝ չգիտեմ, ուստի այստեղ արձանագրում են այն գյուղերը, որոնք Ագարի աջակողմյան եզերքին են, ճիճիմլի գետակից հարավ, որ գետեղեցիցը Հաբանդի մեջ. դրանք են Ղազի Քուրտոզլու փոքրիկ գյուղը, Մազնագակ համագրվանը, Շոխովա ամուր գյուղը, որ հիշեցնում է Հաբանդի Շազվա գյուղը, համաձայն Հին ցուցակի, Գարաճալը գյուղը, Բատար ամուր գյուղը, Սարիաղախը, Մալավրան եւ այլն:

Իսկ Ագար գետի ծախակողմը, խանքոփոյու կամրջից մինչև Բարկուշատի հետ հիշյալ խառնուրդը, ընդարձակ հող է, վերին (հյուսիսային) մասով անտառախիտ, հարավից՝ դաշտային, այլեւ ամայի, ինձ անծանոթ է, թե որ գավառի մեջ էր մտնում, բայց հավանական կարծիքով գետեղելի է Աղահեճի մեջ, հիշենք նաեւ նրա մեջ եղած գյուղերը, համաձայն աշխարհագրույց բարտեզի՝ այլուստ տեղեկություն չունենալով: Քիչ ձորեր եւ վտակներ արձանագրված չեն, որ իջնում են Շուշվա գավառի արեւելակողմի սահմանային լեռներից, որոնցից առաջինը (հյուսիսից հարավ գնալով) Սեիքն է, որ խառնվում է Մուսուլման մեծագույն գետին, որի աղբյուրների մեջ ապահով հանգրվաններ են Ռիջանը, Մուսուլմանլարը, ճամպերախաչը (գուցե ճամբարախաչ՝ նշանավոր անվանումը), Գարազլակը, Քեշիշբենտը, Տայղան գյուղը՝ 3708 բարձրությամբ: Երկրորդ վտակը կրում է խանայի անունը. նրանից հարավ մյուս անանուն [գետակն] է, որի մոտ Հարար գյուղն է: Այս գյուղում 1668թ. գրչագրվել է մի Ավետարան Աղվանից Պետրոս կաթողիկոսի եղբոր՝ Մատթեոս քահանայի համար, ով, ասվում է, թե բնակվում է Գոչա վանքի մոտ: Սակայն հայտնի չէ, թե արդյոք այլ վայրում է այդ վանքը: Հարարի եւ Մուսուլման գետակի արանքում Հարարի գետեզրին մոտիկ կան հետեւյալ գյուղերը. Չիմարի, Սոֆիան, եւ Տեկիրմեն, Գուշիլար, Մախսունլու եւ այլ հանգրվաններ: Հարար վտակին հարավից միանում է Ջանքանակյան անունով գետակը, որն իր մեջ վերին կողմերից (արեւելքից) հյուրընկալում է բազում վտակներ կամ արբյուրներ, ուր արձանագրված են շատ ամրոցներ կամ իջեւանատներ, ինչպես աջից կամ արեւմտակողմից Դաշ-ալըն, Էլիճան, որ համանուն լեռան



Խաչքարեր Խանաձախի անապատի ձորից:

(բարձրությունը 6630) ստորոտին է, Արվակետիքը, Փառաճանը, որ մոտիկ է Հարարին, ծախից հոգաբերող գյուղն է, վերջին երկուսը, որ հայանուն են, չեն հիշված Այունյաց աթոռի հարկացուցակներում եւ ոչ էլ այլուր: Սրան մոտիկ է երկայնածիգ Ճաղատուս լեռը, եւ նրանից հարավ՝ Թոփ աղան լեռը՝ 6260 բարձրությամբ եւ հստ գյուղը: Ձորագետի հարավում ձգվում է նրան հավասար մյուս, բայց սակավ բնակեցված [վայրը], որի գլխին հոգաբերողի հարավից բարձրանում է երկայնամիտ Չեմեն լեռը եւ կոնաձեւ Պոզալ տաղ լեռնակը, որի վերջնամասում Արցախավան գավառների լեռնասահմանին Գինեթաղլար իջեւանատունը կամ ամրոցն է, որից երեսուն է Հաբանդի Գինեթաղը գյուղը: Ձորագետի մյուս մասում հարավից արձանագրված է Պաշալեղ իջեւանատունը եւ Գոմշեճուպան աղբյուրը: Սրա երկու կողմում Ագարի գետեզրին են հետեւյալ չեն գյուղերը՝ Մուրատխան, Խանտեք, Պալիսուլտանի, ճիճիք: Այստեղ եւ այլ մասերում, եթե ստույգ են ցույց տալիս տախտակները, երկիրը կերպարանափոխվում է, պակասում են անտառները: Իսկ գյուղերը, որ բացառապես արձանագրված են Ագարի եզերքին, են Մալավրանին հանդիպակաց Խոճիկը, Էֆենտիլերը, Տանլիլերը, Վերին եւ Ստորին Մաշիուր, Սեւալիք, Մաֆուրուլու, Քյուրտ Մաֆուրուլու, Սեւալիք եւ Ագալիք, որ կից է Բարկուշատ եւ Ագար գետերին: Մաֆուրուլուով է անցել բնագետ Ռատտեն (1890,

մայիսի 26), որ տեսել է սպիտակ արագիլներ՝ բնադրած կարանախիների վրա, եւ մի ծառի վրա տեսել է ութ բույն: Խանուխում հիշատակում է այգիներ, շերամաբույծ թզենիներ, սրանց հետ կան բարձրաբերծ սոսիներ, կաղանախիներ, լտտենիներ (Celtis) եւ կեռասենիներ: Սրանցից ավելի նշանավոր է թվում Ագար գետի եւ Արցախի լեռնասահմանի միջնամասի լեռներից մեկի ստորոտին գտնվող Թունաս գյուղը, կամ Թունասլուն եւ համանուն լեռը 4836 բարձրությամբ եւ նրանից հարավ Թունաս-գյունպեզն է, թվում է, թե մահմեդականների մզկիթ եւ ուխտատեղի է, եւ նրան մոտիկ ինչ-որ իջեւանատներ են:

Այունյաց երկու հզոր գետերի՝ Բարկուշատի եւ Հագարիի միախառնումից հետո, հովիտը երկարում, ձգվում է եւս 10-12 մղոն մինչև Երասխ, չգիտեմ, թե դա որ գավառի մեջ է մտնում, որի պատճառով կարծանագրենք այն գյուղերը, որոնք գետի բուն ձորեզրին են՝ բաց թողնելով օժանդակ գետակի արեւմտյան կամ աջակողմյան մասում գտնվածները՝ դրանք համարելով Կոլվական գավառի մաս: Արդ, Ագարի գետեզրի հետին մասում, աջից հետեւյալ գյուղերն են Գարագիլիսեն, Սորալ գյուղիկը, Ռապայանը, Թաթարը, Սարիլը, Խարալան, Շարոֆանը, եւ Երասխին մոտիկ՝ Խորոզան, ծախից՝ միայն Մուղանլուն՝ Երասխից մոտ մի փարսախս հեռու, Խարալանի հանդիպակաց կողմում: Ավելի վերեւ՝ Մուղանլուի եւ Գարագիլիսի միջ-



նամասում, Ագար գետից երկու մղոն հեռու մի մեծ գյուղ կա՝ Շարոֆան-աղալուն՝ ընդարձակ այգեստաններով, պարտեզներով: Սակայն ինձ հայտնի չեն ազգային հիշատակներ այս վայրից:

ՇԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- \* Ըստ Էջմիածնի «Արարատ» օրագրի, ԺԲ, 399:
- 2\* «Նոր դար», է, 72:
- 3\* «Աղբյուր» ամսագիր, Դ, 36:
- 4\* Երկբայելի համարելով Աղահեճի Սբ Գեւորգի տեղի եւ դիրքի նույնության [վերաբերյալ կարծիքը]՝ ընդօրինակում են Ջալալյանի խոսքը. «Պտկիս բերքը ուխտատեղի է, ուր բարձրավանդակ վայրում կառուցված է գմբեթաղ կեղեցի, որտեղից, ի հաճույս դիտողների, երեսուն է շրջակա դաշտավայրը: Այս ուխտատեղին ունի եկեղեցի՝ վերանորոգված ոմն Հովհաննես վարդապետի ձեռքով, որի գերեզմանը խորանի աջակողմում է, եւ անունը գրված է մեծ տառերով նույն խորանի առաստաղին: Այս խորանի առջեւ կա մի փոքրիկ գերեզման սուրբ Գեւորգի անունով, բայց թե ով էր այս Գեւորգը՝ հայտնի չէ: Եկեղեցու աջակողմյան սյուների վրա Շարոնակությունը՝ էջ 19





Պատմական հուշարձան

# Ներսես Մոկացի

ՀԱՏՎԱԾ ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՆՈՒՆ ԳՐՔԻՑ



ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Ներսես Մոկացի գրվել է Մեծ անապատում: Դրա համար ունենք երկու կոչում: Նախ, 1621 թվականից հետո Ներսես Մոկացին այլևս Մեծ անապատում չէր. նա գնաց Լիմ կղզի՝ այնտեղ նոր միաբանություն հիմնելու եւ, երկրորդ, Փիլիպոս դպիրը նրա հետ Լիմ չի գնացել, հետեւապես նա կարող էր գործի խնդրողը լինել միայն Մեծ անապատում:

Ներսես Մոկացի սկիզբը համակված է մի կենսուրախ տրամադրությամբ, որով հեղինակը դիմում է իր ունկնդիրներին՝ ցանկանալով պատմել այն դեպքերի մասին, որոնց ինքը տեսել է, ինչպես նաեւ այն մարդկանց մասին, որոնք եղան «պարծառաց տեղի եւ կայան»: Դա կարելու է հատկապես իր բացառիկությամբ՝ որպես ուրախ եւ շինարարական ստեղծագործ աշխատանքի գովք, մի բան, որն այնքան պակաս էր այն դարերում:

Այսպես ունեցող ասեմ,  
ունկն դիր բանին միաբան,  
Լսեք, փափագող լերուք,  
ճարտար բաժանվախ արքան,  
Ձի սիրտը սեղան կազմեմ  
եւ կրեմ զձեզ ի խրախարան.  
Կայծերով ծափա հարկը  
ի լսել զճանտ երանական:  
Ձի թե՛ մեք յերեսեալ գորար  
եւ չեղար արժան գովութեան,  
Մակայն մերսիներս եղեն  
պարծառաց տեղի եւ կայան...

Այդ պանծալի անուններից առաջինը, որի մասին խոսում է Ներսես Մոկացին, վերոհիշյալ Մեկիջ Յայկազն է՝ մի քաջարի մարդ, որն իր բազկի հզորության, իմաստուն խելքի շնորհիվ եւ օսմանցիների դեմ մղած բազմաթիվ ճակատամարտերից հաղթանակով դուրս գալու համար դարձել էր Շահ Աբասի սիրելի գորավարներից մեկը: Վերջինս մեծ պատիվներ է տալիս Մեկիջ Յայկազնին եւ որպես վարձատրություն նրան հանձնում հայրենի գավառի՝ Սյունիքի իշխանությունը (1): Իր այս իշխանությունն էլ Մեկիջ Յայկազնը օգտագործել է անապատի հիմնադիրներին անհրաժեշտ օգնություն ցույց տալու ժամանակ: Ներսես Մոկացին Մեկիջ Յայկազնին համարում է անապատի սյուն:

Անապատի սյուն լինել  
եւ գրգեր գթով հայրական,  
Մինչ յիշխանության միջին  
ջանք դներ անապատական...

Անապատի երկրորդ սյունը Պողոս Մոկացի վարդապետն էր: Ներսես Մոկացին վկայում է, որ նա եղել է հայ եկեղեցու անշահախնդիր, անձնուրաց, օրինապահ, համեստ, ցվիրված անձնավորություն: Պողոս Մոկացին շարունակ տեղից տեղ էր շրջում, երկրի տարբեր մասերում բացում դպրոցներ, հիմնում եկեղեցիներ, նորոգում հները: Պողոս վարդապետի բարեմորոգչական այս գործունեությունը հանդիպում է տեղական եկեղեցական իշխանության դիմադրությանը: Ինչպես Ներսես Մոկացին

ԱՅՏԵՔԱՐՏ Անվանի գրականագետ Աելիտա Դոլուխանյանի հիմնական աշխատությունները նվիրված են հայ միջնադարյան գրականությանը, եվրոպացի հայագետների գործունեությանը, հայ տաղանջների քննական բնագրերի կազմմանը: Ծնվել է 1942թ., ավարտել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտը 1964 թվականին, ապա՝ ասպիրանտուրան: 1969 թվականից ասպիրանտուրայի բաժնի վարիչ էր, հայ գրականության ամբիոնի ավագ դասախոս, 1975 թվականից՝ նույն ամբիոնի դոցենտ, 1990 թվականից, արդեն պրոֆեսորի կոչումով, գլխավորել է հայ գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը: 2010 թվականից ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ է:

ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի մասնագիտացված խորհրդի անդամ է, մանկավարժական համալսարանի կառավարման խորհրդի անդամ, ՀՀ նախագահի մրցանակի հանձնախմբի անդամ: Պարգևատրված է «Մովսես Խորենացի» (2003), Ֆ.Նանսենի ոսկե, «Խաչատուր Աբովյան», Հայաստանի գրողների միության գրական վաստակի (2007) մեդալներով: 2008 թվականին արժանացել է «Նիկոլ Աղբալյան» գրական մրցանակի:

է վկայում, «բարկութեան նախանձ բողոք» այդ մարդիկ Պողոս վարդապետին քանիցս կանգնեցնում են դատարանի առաջ. «...ճըզունս բազում կրեաց ի հայու եւ ի տաննի դիւան»: Այդ կապակցությամբ ուշագրավ է ներսեսի անունը նկարագրված մի դատ, որին չենք հանդիպում այլ աղբյուրներում: 1618թ. հայոց երկու կաթողիկոսները՝ եպիսկոպոսների, արեղաների եւ ուրիշ վանականների հետ ներկայանում են Թավրիզ Ղարչղա խանին(2)՝ ամբաստանելու Պողոս Մոկացուն: Խանը, փոխանակ մեղադրելու Պողոս Մոկացուն, հաշտեցնում է երկու կողմերին:

Կայծերով կրտսեր երկու  
նայիկոպոսը համանգամայն,  
Կերտայր ու վանական  
եւ փերթերը շար գումարեցան,  
Ուխտադիրք եղեն միմեանց,  
խորհեցան խորհուրդ միաբան  
եւ չու արարեալ գնացին  
ի Թավրիզ քաղաք Շահասարան:  
Ղարչղա խանին դիպան,  
փորձեաք խօսիք շարացան,  
Թե՛ այր մի օգրարական  
մեզ լինի պարծառ խանգարման:  
Այլ եւ վերին խընամօք  
մարդկութեամբ կրեաց ի յարեան,  
Անագ, թե՛ քահանայից  
չէ պարեհ կալ անմիաբան:  
Վասն որոյ փոշմանեալ  
եւ ինքեանց մեղադիր եղան,  
Եկեալ թողութիւն առին,  
ակամս կամօք յաշտեցան...

Պողոս Մոկացուն, սակայն, հաջողվում է Մեծ անապատում մտերմանալ Մովսես Տաթևացու հետ ու միասին գործել ազգի եւ եկեղեցու վերանորոգման համար (3): Սկիզբ են առնում նոր հալածանքներ Մովսես Տաթևացու եւ Պողոս Մոկացու դեմ: Երբեմն գործն այնքան է բարդանում, որ նրանց դատը հանձնվում է պարսից խաներին եւ անգամ Շահ Աբաս թագավորին:

Անապատի մյուս գործիչները Սարգիս Ամբերդցին եւ Կիրակոս Տրապիզոնցին էին: Այս երկուսն իրար հանդիպեցին Երուսաղեմում, ուր գնացել էին ուսումնասիրելու տեղի միաբանությունների կարգ ու կանոնը: Սրանց գործունեությունը մինչեւ իրենց կյանքի վերջը սերտորեն շղկապված էր միմյանց հետ: Ներսես Մոկացին նրանց նմանեցնում է երկու ամուլների, որոնք որպես բանական մշակներ խոսքանցյալ երկիրը վերածեցին բերրի անդա-



տանի:  
Մ.Ք.  
Ներսես Մոկացու ներսեսյանում դրվատված է հայրենասիրությունը, շինարարական ստեղծագործ աշխատանքը, լուսավորությունը: Հայրենասիրությունը դրսևորված է հատկապես Մեկիջ Յայկազնի կերպարի միջոցով:

Հեղինակը նկարագրում է, որ Մեկիջ Յայկազնը ուներ արքայական ձեւ, պերճ, հսկայածեւ մարմին, վայելչական տեսք եւ դյուցազնական պատկեր: Նա հերոսին պատկերում է իր բոլոր գեմքերով գրահավորված, վարժված, նժույզի վրա նստած, թշնամիների սարսափահար անելիս:

Ի շահարակել զինուցն  
սիրկեց լինել եւ մարդկան  
Եւ ի իրզախելն ուժգին  
բեկանել եւ զիր դիմակայն:  
Յարչաւելն երիվարին  
կրթածու եւ վարժողական,  
Դափր հարանել դաշտին  
դողացուցանել գամեանայ,  
Դասք երազէն հերեսակաց  
առաջի զնոյակ ընթանան,  
Ջգուշութեամբ մեծու սպասեն  
հրամանին յոյժ խորիդական...

Այս նկարագիրը միաժամանակ գնահատելի է նրանով, որ ազգային ոգու բարձրացման արտահայտություն է: Մեկիջ Յայկազնի կերպարը ժողովրդի ազատագրման համար ելած մարդու կերպար է՝ նման մեր միջնադարյան գրականության մեջ կերտված հայրենասեր իրական-պատմական հերոսների կերպարներին:

Այս առումով նշված տողերը շարունակությունն են Գրիգոր Տղայի՝ Լեւոն Բ իշխանին, Հովհաննես Թլկուրանցու՝ Լիպարիտ գորավարին նվիրված գովերի:

Ներսես Մոկացին հայրենասիրության հետ ներթողում է շինարարական ստեղծագործ աշխատանքը, եկեղեցիների կառուցումը՝ դրանք կապելով Պողոս Մոկացու, իսկ դպրոցը, ուսումը, կրթությունը՝ Սարգիս Ամբերդցու եւ Կիրակոս Տրապիզոնցու գործունեության հետ: Լուսավորության գովքը արվում է ցմնագին տոնով ու մեծ ոգեւորությամբ:

Յնծալ պարզի Հայաստանս  
եւ խայրալ խնձոյս հոգեկան,  
Պարանցիկ առել յուսով  
եւ երգել երգ հոմերական,  
Նոր սրինգ եւ նոր փալիդ,  
Նոր քնար եւ նոր երգարան,

նոր կանառախումբ լինել  
եւ ընել յոյժ խորիդական:  
Բանալ բզարգանդ մրսոց  
եւ ճաշակ փալ համբերութեան,  
Ընվել ըզհամերութիւն  
բաժանիս այս իմաստութեան:  
Գրեան վաղըջուց փակած՝  
ընթերցան, ոճով մեկնեցան,  
Եւ յապրեթք եկեղեցոյ  
գալստեամբ սոցին վառեցան...

Ներսես Մոկացու ներսեսյանից երեւում է նրա քաջատեսակությունը մեր անցյալի գրականությանը. զգալի է հատկապես Աստվածաշնչի, Մովսես Խորենացու եւ Գրիգոր Նարեկացու ազդեցությունը:

Ներսես Մոկացու ներսեսյանն արձագանքներ կան երգ երգոցից (զուլխ Ա, Գ) եւ եզեկիելի մարգարեությունից (զուլխ Ա):

Ներսես Մոկացու ներսեսյանն առեսարակ լավատեսական երկ է: Այս առումով ուշագրավ է նաեւ նրա ավարտը, ուր հեղինակը սփոփանքի եւ հուսադրման խոսքեր է ասում. նա հավատացած է, որ չնայած Մեծ անապատի հիմնադիրները մահացան, բայց նրանք թողեցին արժանի հաջորդներ: Ահա մի քանի տող այդ մասից.


Ի հարց եւ պապանց ուսար,  
յառաջին սրբոցն սասցան,  
Հիսիսուս հաւեն առնուն  
մեր ծաղկունքս եւ խիստը գորանան,  
Եւ փապրն խորշակախար  
ծաղկընկէց առնէ առժաման:  
Ահա ձեզ ձայն աներեսց,  
սփոփանաց եւ յուսողական,  
Թե՛պէր սերմանողըն անկան,  
սերմանալքն յոյժ արդիւնացան...

Այս տողերից առաջին ութն արժանացել են ակադեմիկոս Աշ. Հովհաննիսյանի ուշադրությանը: Նա դրանք դիտել է որպես հայերի ազատագրման՝ հյուսիսից սպավող հույսի արտահայտություն: Աշ. Հովհաննիսյանը գտնում է, որ հնարավոր է նաեւ հայերի ազատագրման «...«ռուսական» վերսիայի ձեւավորմանը նպաստել էր տակավին միջնադարում խմորված այն հայացքը, թե «հանուրց հյուսիսականաց վեհագույն» հայ կամ քրիստոնյա այլ իշխանություններն են հանդիսանում հայ ժողովրդի փրկության ապավենը: Որ այդ հայացքը չէր մարել անգամ Օրիին մոտ ժամանակներում՝ եզրակացնում ենք Ներսես Մոկացու 1621 թվականին գրած նշանավոր ներսեսյան...» (4):





այլ ոչ ստանդարտ ձևի, սպիտակավուն խաչքարի վրա, որն ունի մոտ 1,9 մետր երկարություն, 8 խաչ կա քանդակված: Կողքին մի քանի մման քարեր են՝ շիրմաքարերի բեկորներ, որոնց վրա դարձյալ խաչեր են քանդակված, հասարակ, բայց պատմող խաչեր: Տարածքում շատ են մման քարերը, որոնք ծանրության պատճառով չկարողացանք շրջել: Ժամանակ է պետք եւ ուժ, որ բոլոր շիրմաքարերը բարձրացվեն իրենց նախնական ձևով, մի տեղ հավաքվեն: Անհրաժեշտ է նաեւ տարածքում պեղումներ կատարել. համոզված են, որ որեւէ արձանագիր քար էլ կգտնվի ու կպատմի, թե ինչ գյուղատեղի է: Այս տարածքը կարելի էր վերականգնել, որ դեպի արեւմուտք ընկած բլրի հետեւում է գտնվում պատմական Ալիդուլի գյուղը, որտեղ մինչեւ 20-րդ դարի սկիզբը հայեր էին բնակվում, եւ որտեղ թուրք-թաթարների կողմից 1905 թվականին կազմակերպվեց հայերի ջարդ: Ցած ենք իջնում՝ եւս մեկ հայկական համապատասխան տեղ գտած, եւս մեկ փաստ, որ այս տարածքներում բարձր քաղաքակրթություն է եղել, որ Աղահեճքն ու Վայկունիքը հայոց ծաղկուն գավառներ են եղել միջնադարում, դրանից առաջ: Անցնում ենք աշնանային Շալուայի միջով, որտեղ մի վտակ է միանում՝ իջնելով Դարաբաղի լեռնաշղթայից: Բարձրանում ենք Արտաշավի, մասնակցում Լեռնիդ Ազգալոյանի 70-ամյակին նվիրված ցերեկույթին, որի հերոսները կրթօջախի 42 աշակերտներն էին: Նրանք իրենց խոսքով, իրենց երգով, այստեղ ապրելով ու շենացնելով՝ Լեռնիդին, մնացած մարտիրոս քաջորդիներին ասում են՝ մենք ձեր գործի շարունակողներն ենք՝ վկա հայտնի ու նորահայտ խաչքարերը:



Բերձոր. ԼՂՅ Զառաթաղի շրջանի վարչական կենտրոնը:

### ԲԵՐՈՎԱԶՈՐՆ ԱՅԼԵՎԱ ԿՏԱՆԳԱՏ ԶԷ

Շուշիի շրջանի Բերդաձորի ենթաշրջանի Տասրվերստ փոքրիկ գյուղն այն ժամանակ՝ 1990թ. աշնանը, տխուր էր, բայց գեղեցիկ: Ծաղկաձոր կոչեցինք գետակի հովտում, անտառապատ սարավանդի հովանու տակ ծվարած հայոց շենը, որի միջով անցնում էր Լաչին-Շուշի մայրուղին՝ իր հետ բերելով թուրքական շարիք:

Նույն ճանապարհից քիչ վերեւ մեր շտաբն էր՝ այժմ ավերակ ու տխուր, կարոտով լի: Այդ տանն էինք ապրում. իհարկե, եթե դա ապրել էր: Փիշերները հսկում էինք դիրքերում, շտաբում մնում էին 2-3 հոգի՝ տարածքի՝ չորս կողմից թուրքերով շրջապատման մեջ մնացած 3 հայկական գյուղի՝ Հին Շեն, Մեծ Շեն, Եղծահող, շտաբերի հետ կապ պահպանելու եւ հարկ եղած դեպքում դիրքերում հսկողներին լուրեր հաղորդելու համար: Ցերեկները մի քիչ հանգստանալուց հետո բարձրանում էինք մոտակա ամտառ կամ բլրակները: Յուրաքանչյուր պահի կարող էին հայտնվել խորհրդային՝ թուրքերի կողմից կաշառված եւ նրանց հլուց դարձած զինվորականները՝ անձնագրային ռեժիմի ստուգումներ կատարելու կամ այլ ոչ բարի նպատակներով: Մեր այնտեղ եղած ժամանակ հայտնվեցին 2-3 անգամ՝ մեկ բանակցություններ վարելու նպատակով՝ եկել էին Շուշիի շրջանի ոստիկանության հետ, մեկ՝ Ծաղկաձորից քիչ վերեւ ընկած ենթաշրջանակ Կանաչ Թալա գյուղը բնական գագ անցկացնելու, մեկ՝ այստեղ կառուցվող գործարանի աշխատանքներն արգելելու եւ այլ պատճառներով: Կանաչ Թալա գյուղը, լինելով հայկական, 60-80-ական թվականներին հայաթափ էր եղել, իսկական տերերը հիմնականում կենցաղային վատ պայմանների պատճառով, որոնք ստեղծվել էին արհեստականորեն, լքել էին հարազատ օջախները, տեղափոխվել Ստեփանակերտ, Հայաստան, Ռուսաստան: Եկել էին աղբեջանցի հովիվներ՝ իբր ժամանակավոր, եւ տիրացել հայկական գյուղին: Իսկ այդ տարիներին ընդամենը 10-12 տնտեսություն ունեցող թուրքաբնակ Կանաչ Թալան պարզապես չարիք էր Բերձորի համար. այստեղ էին տեղակայվել թուրք օժոնակներն եւ այլ ռազմական ջոկատներ, եւ այստեղից էին ղեկավարվում Բերդաձորի թալանը, շրջափակումը: Հայկական գյուղերում տեղակայված էին Հայաստանից եկած ռազմական փոքրիկ խմբեր կամ ջոկատներ՝ հիմնականում տեղացի տղաների հետ հնարավոր հարձակումներին դիմակայելու, ազգաբնակչությանը պաշտպանելու նպատակով: Այժմ

կարոտով են հիշում իմ մարտական ընկերներին, որոնցից Առնոն, Անդրոն, Ստյոպան, Վարդանը, Արմենը, Պավլոն, Վաղինակը, Արմիկը... չկան, անմահացան ռազմի ճանապարհներից:

90-ի նոյեմբերին խիստ լարված էր իրավիճակը Բերդաձորում: Թշնամին ձգտում էր վերջնականապես հայաթափ անել արծվաբույրը եւ Արցախ-Մայր Հայաստան կապն ավելի հեռացնել, դարձնել անհնար: Այս նպատակով իրագործում էր ցանկացած խարդավանք: Շատ վտանգավոր էր դարձել կապը Ստեփանակերտի հետ: Թուրքաբնակ Շուշի, Չարիսլու, Լիսազոր բնակավայրերի մոտ անպայման քարկոծվում ու գնդակոծվում էին հայկական մեքենաները, եւ միակ երթուղային ավտոբուսը, որի վարորդ Վազիֆն ամեն անգամ ուղեւորվելով Բերդաձոր եւ հակառակ՝ Ստեփանակերտ, չգիտեր՝ տուն հասնելու է երեկոյան: Գիշտ է՝ այդ ավտոբուսի երթն ապահովում էին խորհրդային զինվորները՝ զրահամեքենաներով, մեկ-երկու դասակ ավտոմատավոր զինվորների ուղեկցությամբ, սակայն թուրք խուժանն իր գործն անում էր. գիտեր՝ անպատիժ է մնալու: Նոյեմբերի կեսին պետք է վերադառնայինք Երևան. համալսարանում կհասնայակայինք

քննություններից նախապատրաստվելու: Ստեփանակերտի օդանավակայանից Երևան թռչելը շատ էր դժվարացել: Մի կերպ կարողացանք մեր երկու ընկերոջը՝ Արսենին եւ Ստյոպային ուղարկել, եւ ու Արթուրը մնացինք մյուս չվերթով գնալու, բայց չտեսցվեց: Մեր՝ օդանավակայանում գտնվելը նաեւ վտանգավոր էր նրանով, որ ոչ ցանկալի ամծի գրանցում ունեինք եւ օդանավակայանը հսկող խորհրդային զինվորի կամ թուրք օժոնակների կողմից ճանաչվելու դեպքում կծերբակալվեինք: Իսկ այդ օրը մեր ընկեր Արսենը նույնիսկ հարվածեց ռուս զինվորին, որն արցունքաբեր գագ փչեց ժողովրդի վրա: Իհարկե, զինվորականները կծերբակալվեին նրան, եթե ժողովրդից չվախենային. երկար սպասումներն ու զինվորականների վերաբերմունքը նյարդայնացրել էին ուղեւորներին: Մինչեւ մեր թռիչքի օրը 2-3 օր ժամանակ ունեինք եւ որոշեցինք այցելել Գանձասար ու Ամարաս: Ես ու Արթուրը գիշերով հասանք Գանձասարի վանք, որտեղ Երևանից եկած վարպետները նորոգման աշխատանքներ էին կատարում, գիշերեցինք նրանց մոտ, առավոտյան շրջեցինք վանքի տարածքում, լուսանկարեցինք եւ վերադարձանք: Հաջորդ օրն ուղեւորվեցինք

Ամարաս: Մեզ հետ էր նաեւ Գագիկը՝ մեր մարտական ընկերը. Ստեփանակերտում նրանց տանն էինք մնում: Բնիկ Բերդաձորի Տասրվերստ գյուղից էին, հետո տեղափոխվել էին Շուշի, 88-ից՝ Ստեփանակերտ: Պապն ու տատը գյուղում էին ապրում: Մինչեւ հասանք Մոս գյուղը, արդեն մութ էր: Որոշեցինք գիշերել գյուղում գործող հյուրանոցում, սակայն տեղ չկար. Մոսկվայից եկած ՊԱԿ-ի աշխատողներ էին տեղավորվել, եւ գյուղխորհրդում, իմանալով մեր՝ ազատամարտիկ լինելը, նպատակահարմար չգտան տեղավորել հյուրանոցում: Փիշերեցինք արհմիության նախագահի տանը՝ իսկական արցախցու հյուրընկալ օջախ: Առավոտյան Մոսի կլիխոյի տրակտորով հասանք Ամարասի վանք: Ամարասից վերադարձանք ոտքով: Ծանապարհին մի «Մոսկվիչ» մեքենա հանդիպեց, նստեցինք: Վարորդը, երբ իմացավ, որ Բերդաձորից ենք եկել, ասաց, որ թուրքերն այդ գյուղերը վառել են: Հասանք Ստեփանակերտ, հեռախոսով կապվեցինք Բերդաձորի շտաբի հետ: Պարզվեց, որ այդ գիշեր՝ նոյեմբերի 17-ին, թուրքերը տարել էին Եղծահողի ոչխարի հոտը՝ սպանելով հովիվ Ե.Ծատրյանին: Մինչ այդ՝ հոկտեմբերի վերջերին, գիշերով տարան նաեւ մոտ 300 գլուխ կով: Այդ ժամանակ անասնապահներին ծեծել եւ թողել էին ճանապարհին: Մենք, իմանալով, որ այդ ավազակությունը կատարվել է Կանաչ Թալայում բնակվածների ձեռքով, նրանցից պահանջեցինք վերադարձնել անասունը: Սակայն բնական է, թուրքերը հրաժարվեցին եւ երդվեցին, թե իրենք տեղյակ չեն: Ստիպված սկսեցինք գնդակոծել նրանց գյուղը: Իհարկե, մեծ վնաս չէինք հասցնի որսորդական եւ ձեռագործ կարաքին-հրացաններով: Եկան Շուշիից ու Լաչինից խորհրդային բանակի ներկայացուցիչներ, խոստացան գտնել ու պատժել ավազակներին, հետ վերադարձնել գողոնը: Սակայն շուտով ռուս սպան հարբեց եւ նույնիսկ շփոթում էր հայ-թուրքը: Իսկ այս անգամ՝ նոյեմբերի 17-ին, մեր տղաներն արդեն վառել էին Կանաչ Թալայի մի քանի տուն. դրանք հիմնականում նոր ֆիննական տնակներ էին՝ նախատեսված թուրք վերաբնակիչների համար: Ի պատասխան մերոնց գործողության՝ Շուշիի ոստիկանության աշխատակիցները, զինված ավտոմատներով, գրահաբաճկոններով, մտել էին Ծաղկաձոր ու վառել գյուղը: Իր տան մեջ այրվել էր նաեւ 90-ամյա Նանաշ Հոբանյանը, իսկ նրա Հիրակ թոռը, երբ ցանկացել էր օգնության հասնել, թուրքերը կրակել էին նրա վրա: Բարեբախտաբար նա չէր վնասվել եւ պատասխարվելով Շարունակությունը՝ էջ 24



Սուրբ Համբարձում եկեղեցին Բերձորում՝ կառուցված Արցախյան պատերազմի, հիշարժակ հավերժացնելու նպատակով:

Սա Հայաստանն է եւ վերջ

# Քաշաթաղ

Սկիզբը՝ էջ 23

հարմար դիրքում՝ ինքն էր կրակել թուրքերի կողմ՝ վիրավորելով հրամանատարին: Թուրքերը ստիպված նահանջել էին: Սա էր այդ օրերի պատմությունը, եւ իմանալով այս ամենը՝ նորից Վազիֆի ավտոբուսով վերադառնում ենք Բերդաձոր: Իրավիճակը շտկելու եւ բերդաձորցիների անվտանգությունն ապահովելու համար ուղղաթիռներով մի քանի տասնյակ զինվորներ էին եկել Երեւանից Վ.Սարգսյանի հրամանով:

Հանդիպում եմ նախկին մարտական ընկերներիցս հոկտեմբերյանցի Պավլոյին. 1993-ին նահատակվեց Մարտակերտում, Գառնիկին (Վարդենիսում «Միացում» ջոկատի հրամանատարն էր, եւ միասին էինք հսկում Սողբուն), Վարդան Բախշյանին, համալսարանից լավ գիտեինք իրար. մարտիրոսվեց Ստեփանակերտի հյուսիսում՝ Հասանաբաղում, Արմենին՝ 1 տարի առաջ միասին դարձյալ Բերդաձորում էինք. քաջաբար մարտիրոսվեց Մարտակերտում շրջապատման մեջ, Վահագն Վարդենանյանի ջոկատի հետ, ուրիշների: Նոյեմբերի 21-ին Հին Շենուն էի, այնտեղ էին նաեւ Իգոր Մուրադյանը, Ժաննա Գալստյանը, լրագրողներ Ստեփանակերտից: Առավոտյան դիրքերում էի: Բացի հրացանից, հետո մշտապես լուսանկարչական ապարատ ունեի: Նկարում եմ տղաներին: Այժմ ձեռքիս տակ է այդ օրերի մի լուսանկար՝ 5 զինված տղա: Սաքոյին եւ Գագիկին (Հաղորդի Գագո) գիտեի դարձյալ 89-ից, իսկ 3-ին չէի ճանաչում: Այժմ էլ չեմ հիշում, թե ով էին նկարը եզրափակողները, իսկ ձախից երկրորդը՝ երեւանցի Վաղինակը. նույն օրը երեկոյան նահատակվեց գյուղի պաշտպանության ժամանակ: Դեռեւս առավոտյան զգացվում էր, որ Լաչինի կողմից թուրքերի շարժ է նկատվում Մեծ Շենի ուղղությամբ: Իսկ Լաչինից մոտ 10կմ հարավ ընկած Աղանոս գյուղից նաեւ զրահամեքենաներ էին շարժվում Հին Շենի ուղղությամբ: Քունին քար կոչվող բարձունքից, որտեղ մեր դիրքերն էին, լավ էր երեւում այդ կողմը: Բերդաձորի ինքնապաշտպանության ռաիվիրա Առ-

նո Սկրտչյանը շտաբում հրահանգներ էր տալիս, դեկավարում: Միասին փորձում էինք գործի գցել ինքնաշեն գնդացիքը: Երեկոյան սկսվեց հարձակումը: Թշնամուն հաջողվեց վերցնել շրջապատին իշխող դիրքերից մեկն ու կրակ բացել նաեւ գյուղի վրա: 3-4 ժամ տեւած մարտը դադարեց. թշնամին նահանջեց: Շատերն իջան դիրքերից: Պարզվեց, որ 2 հոգի չկան: Որոշում ենք բարձրանալ մարտավայր՝ փնտրելու տղաներին: Վարդան Բախշյանն ինձ է տալիս իր ավտոմատը՝ տեսնելով ձեռքիս

Բերդաձորն այսօր

որսորդական հրացանը: 5-6 հոգով, նաեւ կորած տղաներից հինջենցի Սամվելի եղբայրը՝ Եղիկը, բարձրանում ենք Քունին քարի դիրքեր: Քիչ ներքետում հանդիպում ենք մեր տղաներից երկուսին, որոնք խնդրում են փոխարինել իրենց. առավոտվանից այստեղ էին: Ես եւ ընկերս՝ Արթուրը, փոխարինում ենք նրանց, մեզ է միանում նաեւ Շիրակը, որի մասին արդեն ասվել է: Տղաները շարունակում են վերելքը, եւ քիչ անց լավում է Սամվելի եղբոր աղիտը ճիչը. «Սամվել, հե՛ Սամվել...: Գտնում են նահատակներին»՝ յուրաքանչյուրը մի քանի տասնյակ գնդակից խոցված: Առավոտյան իջնում ենք դիրքերից: Պարզվում է՝ մյուս նահատակը երեւանցի Վաղինակն էր, ում լուսանկարել էի առավոտյան: Սամվելի մայրը մեզանից պահանջում է որդու

Աղավտ գետը

վրեժը լուծել: Մյուս օրը ուղղաթիռով գալիս եմ Վազգեն Սարգսյանը եւ Բերդաձորի ինքնապաշտպանության խորհրդի (ԲԻԽ) նախագահ Անդրանիկ Հարությունյանը (զոհվեց ավտովթարից Արտաշատի մոտ): Վաղինակի դին տեղափոխում ենք Երեւան: Ուղղաթիռը Գորիսում վայրէջք է կատարում՝ մի վիրավոր ազատամարտիկի վերցնելու նպատակով: Սպարապետը մեզ հրամայում է այնպես անել, որ վիրա-



վորը չիմանա նահատակի մասին: Տարիներ են անցել: Այդ ընթացքում Բերդաձորն ավելի ահավոր օրեր տեսավ, ուղիղ մեկ տարի հայաթափ մնաց: Գերվեցին շատ տղաներ, իսկ Առնո Սկրտչյանն ու Եղծախողի Հրաչ Պետրոսյանը տանջամահ եղան Բաքվի բանտերում: Մարտադաշտերում մարտիրոսվեցին մի քանի տասնյակ բերդաձորցիներ: Իր հղի կնոջը պաշտպանելու համար գնդակահարվեց Անուշավան

Գրիգորյանը Մեծ Շենուն: Բայց այսօր կա Բերդաձորը, եւ նորից հիշում եմ տղաներին՝ ողջ եւ նահատակ՝ Առնոյին, Հրաչին, Արմիկին, Կարենին, Սերոբին, Ռաֆիկին, Պավլոյին... այլոց: Իսկ Սամվելի մորը պետք է ասել, որ իր որդու վրեժը լուծել ենք. Շուշին ու Լաչինը թուրքական որջեր չեն այլեւս, ճանապարհն էլ վտանգված չէ: ■

# Խանաձախ

Սկիզբը՝ էջ 21

յերեն արձանագրության մեջ կարդում ենք. «Ի թագաւորութեան Շահ Աբասին եւ Աղան որդի Պարոն Հայկազին կանկնեցի խաչս անուանըն Պողոս վարդապետին բարէխօս Այ. Քրիստոնէից ի թվկս հաոց: ՌԿԹ: (1620) երկրին մուլքն պար-ն Հայկազին է»:

Գյուղի Բահավորի եկեղեցու ուղղու-

Արցախի համաձայն գյուղին վերաբերող Ստ. Մելիք-Բախշյանի հեղինակած հոդվածում. «17-18-րդ դդ եղել է հաչեն գավ-ի Քաշաթաղի մելիքության կենտրոնը: Բնակչության նախնիները գաղթել են Մյունիքի համաձախ (այժմյան Գորիսի շրջ-ի Խնաձախ) գ -ից , որոնք 1686թ. (ըստ Ռաֆֆու՝

րաբերյալ հայտնում են տարբեր կարծիքներ: Տարեցներից ոմանք գտնում են, որ բնակիչները բնկ են կան էլ եկել են մոտակա գյուղերից, իսկ ահա տարեց Լյուդվիգ Միքայելյանը հայտնում է, որ իրենց նախնիները Խանաձախ են եկել Ուրմիայից՝ 1828թ. պարսկահայերի ներգաղթի ժամանակ: Գյուղի խոսվածքը, ներկայացնելով Գորիսի բարբառը, որոշակի շեշտադրումներով տարբերվում է այլ գյուղերի բնակիչների խոսվածքից:

- ժէ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ Գ, Երեւան, 1984, էջ 256:
- Մարգարյան Ալ., Մի քանի տեղանունների ծագման մասին, ՊԲՀ, 1988, թիվ 4, էջ 126: Հետաքրքիր է, որ ձայնավորները սղված են նաեւ բնակիչների ինքնանվան մեջ. խնծխեցի:
- Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ.թ, 1973, էջ 327:
- Խնկիկյան Օ., Պեղումներ Գորիսի շրջանում, ՊԲՀ, 1985, թիվ 3, էջ 164-176: Այդ նյութերը տեղ են գտել նաեւ հեղինակի ԱՄՆ-ում անգլերեն հրատարակած մենագրության մեջ (տես՝ Onnik S. Xnkikyan, Syunik During the Bronze and iron Ages, U. S. A., Barrington, 2002, էջ 90-93, 160-161):
- Պատմում են, որ խաչքարն իր վրա վերցնելով կայծակի հարվածը՝ մի անասնապահ մարդու կյանք է փրկել:
- Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հ 2, Երեւան, 1988, 641: Տես նաեւ Մ. Եպիսկ. Բարխուդարեանց, Պատմութիւն Աղուանից, Բ հատոր, Թիֆլիս, 1907, էջ 52: Մ. Բարխուդարյանը ինքը եւս այդ գյուղի ծնունդ է:

ՍԵՐՈՒՅՑ ՀԱՆԿԵՐՈՂՅԱՆ



Նորից տեղադրված քարարձանի կողին փորագրված է 1581 թվականը, որը, կարծում ենք, հին խաչքարի վրա սխալ կարդացված թվականի արդյունք է: Այդ թվականին Մելիք Հայկազյանը արդեն իսկ հանգուցյալ էր: Խանաձախ գյուղի արեւելյան ծայրամասում, ցածրիկ բլրի վրա կանգնեցված է 1,45 մ x 0,75 մ x 0,20 մ չափերով խաչքար, որն իր վրա կրում է երկլեզվյան՝ հայերեն ու պարսկերեն արձանագրություններ: Հա-

թյամբ գտնվող հարավային խաչքարը եւ վրայի արձանագրությունը լիովին ուսումնասիրված չէ: Մյունիքի Խանաձախն է ծնունդ տվել Արցախ աշխարհի Խանաձախ բնակավայրին: Այնտեղ հիմնված մեր բնակավայրը կոչվել է Նոր Խանաձախ, այնտեղ նաեւ հիմնվել է նույնանուն՝ Քաշաթաղի մելիքությունը: Այդ մասին վկայում են եւ Ռաֆֆին, եւ Լեոնը: Այդ մասին մենք կարդում ենք նաեւ ՀՀ տեղանունների բառարանում՝


1687 թ- Ա.Հ.) նախ բնակություն են հաստատել Ջրաբերդում, ապա՝ այս գ -ում »(7):

### ՃԱՆՈՒՑԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Գյուղը ծովի մակարդակից բարձր է 1394մ: 2007թ. գյուղում եղել է 255 ընտանիք՝ 1055 մարդ-բնակչությամբ (արական՝ 505, իգ.՝ 550), 1988-ին բնակիչների թիվը եղել է 888, 2003-ին՝ 1086 մարդ: Գյուղաբնակների ծագման վե-

# Խնածախ, թե՛ Խանածախ

«ՋԱՆԳԵԶՈՒՐ» ԹԵՐԹՈՒՄ 1991  
ԹՎԱԿԱՆԻՆ ԲԱՆԱԿԻՃՈՒՄ ԷԻՆ  
ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՐԳԱՐՅԱՆՆ ՈՒ  
ՍԵՐՈ ԽԱՆՋԱԳՅԱՆԸ



«Ջանգեզուր»  
թերթի խմբագիր  
Ս.Ալեքսանյանին

## ՍԵՐՈ ԽԱՆՋԱԳՅԱՆ

Սիրելի Սամվել  
Ուշք ու միտքս Ջանգեզուրի վրա է: Նորից կրակի մեջ եք:

«Ջանգեզուրը» ստանում են ու կարդում սրտի դողով: Հիշո՞ւմ եք մեր գրույցը՝ Խնածախ, թե՛ Խանածախ: Եվ ահա թերթի հուլիսի 24-ի համարում դեմ առա նույն դառնությանը, մեր այդ պատմական գյուղի անունը նորից է աղավաղվել, դարձել «Խանածախ»-խանի ծախած:

Ինքը՝ Ստ. Օրբելյանը Խոնածախ է գրում: Դա ձեռագրում: Ապա նրա գրքի երկու հրատարակություններում, մեկը 1955թ., Փարիզ, հրատարակիչ Կարապետ վարդապետ, մյուսը՝ այս դարի սկզբին (Շուշի) նույնպես Խնածախ է:

Նշանավոր էփրիկյանը գրում է. «Խոնածախ», Խնածախ: - Գյուղ Այունյաց Հաբանդ գավառի («Բնաշխարհիկ բառարան» - 1902թ. էջ 131): Ալիշանը «Խնածախ» է գրում («Սիսական» էջ 255, 264, 268):

1986-ին Օրբելյանի պատմությունն աշխարհաբարի վերածած ու տպագրած մի երկու հոգի, աղավաղելով Օրբելյանին, Ալիշանին, էփրիկյանին, գրել են «Խանածախ»: Այդ մարդիկ չեն հասկացել, որ Խանածախը ուրիշ գյուղ է: Ասածս ազնիվ էփրիկյանն իր մեծարժեք բառարանում գրում է. - «Խանածախ: - Գյուղ Արցախի խաչեն գավառի»:

Նույնիսկ խորհրդային շրջանում, «Վարչատերիտորիալ բաժանում» պաշտոնական տեղեկագրի մեջ գրված է «Խնածախ»:

Ինչի եք անտեսում այդ անհերքելի փաստերը եւ Խնածախը դարձնում «Խանածախ»: Այն էլ այս ճակատագրական օրերին, երբ Մութալիբով շունը ոռնում է, թե Ջանգեզուրն իրենցն է, թե դրա տեղանունները թուրքական են:

Ուղղակի խնդրում են՝ օգտագործեք բնիկ հայկականը: 2<sup>ե</sup> որ այդ գյուղի ժողովուրդը եւս «Խնածախ» է ասում:

26 հուլիսի 1991թ., «Ջանգեզուր», 1991, 17 օգոստոսի, N83



Խանածախի Սուրբ Հովհաննէ եկեղեցու զանգակաբունը



## ԱՆՅԵՐՔԵԼԻ ՓԱՍՏԵՐԸ ՆԱՄԱԿԱԳԻՐՆ Է ԱՆՏԵՍՈՒՄ

### ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Այունյաց աշխարհի նախկին Հաբանդ գավառի եւ ներկայիս Գորիսի շրջանի Խանածախ (բարբառային հնչումով՝ Խնածախ) գյուղը բազմադարյան պատմություն ունի: Անվանի պատմաբան Մորուս Հասարայանի կարծիքով այն մինչեւ իսկ «երկուս եւ կես հազար տարեկան է» (տե՛ս նրա «Պատմագիտական ուսումնասիրություններ» աշխատությունը, Երեւան, 1985, էջ 155):

Հնագույն պատմություն ունեցող այդ գյուղի անվան ծագման մասին առիթ ենք ունեցել խոսելու մի քանի անգամ: Հենվելով 13-րդ դարի նշանավոր պատմիչ Ստ.Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատության երեք հրատարակությունների վրա, որոնցից առաջինում

(Փարիզ, 1859, էջ 267) եւ երրորդում (Թիֆլիս, 1910, էջ 517) գյուղը հիշատակվում է Խոնածախ, իսկ երկրորդում (Մոսկվա, 1861, էջ 375)՝ Խանածախ, այլ ընթերցվածքով՝ Խոնածախ ձեւով, մեր «Գորիսի բարբառը» (Երեւան, 1975, էջ 4) ուսումնասիրության մեջ դրանցից հնագույնն ու նախնականն ենք համարել Խոնածախը եւ ըստ այդմ էլ նշել, որ դա «ո-ը» փոփոխությամբ դարձել է Խնածախ (= Խընածախ), որը բարբառային բնույթ ունի եւ հետեւաբար՝ ճիշտ կլիներ, եթե գործածվեր հենց բուն Խոնածախ ձեւով»:

Պետք է, սակայն, ասել, առաջինը գյուղի այդ անվանածեւը հին ու նախնական է ճանաչել Ղ.Ալիշանը: Նա իր «Սիսական» պատկառագրու աշխատության մեջ (Վեներտիկ, 1893, էջ 264) շատ պարզ ու որոշ գրում է. «Յետին գիւղ Հաբանդայ ի հիւսիսակողմն՝ ի խաղս վտակաց Ազոլան գետոյ, չորիւք մղօնոք ի ՀՍ. Մ. Տեղոյ, ի գեղեցիկ ձորակի՝ է հինն (ընդօժումն իմն է-Ա.Ս.) Խոնածախ, այժմս Խնածախ ձայնեալ, որ հարկէր Աթոռոյն 20 բեռն, յորմէ գուշակի մեծ լինել»:

Այսպիսով, միանգամայն իրավացիորեն Ղ.Ալիշանը Խնածախը գյուղի նախնական անվան փոփոխված՝ «այժմս... ձայնեալ», այսինքն՝ բարբառային ձեւ է համարել եւ մեծ մասամբ էլ դրա փոխարեն Խոնածախ ձեւը գործածել (տե՛ս նույն տեղում, էջ 255, 264, 268):

Խոնածախը գյուղի ավելի հին ու նախնական անվանածեւ է ճանաչել եւ այդպես է գործածել նաեւ պատմաբան Մորուս Հասարայանը: «Գորիսի շրջանի Խնածախ գյուղի անունը, - նշում է նա, - գրավոր հիշվում է առաջին անգամ Ստ. Օրբելյանի Այդտեղ Խնածախը գրված է Խոնածախ ձեւով: Ուստի ոչ մի կապ չունի խան բառի հետ, կամ խանի (ն) ծախած սխալ պարզունակ բացատրության հետ» (տե՛ս նշվ. աշխ.-ը, էջ 155): Հարգանք մատուցելով երկու հեղինակներին եւ առաջ գնալով, պետք է, սակայն, ասել, որ նորահայտ փաստերը ցույց են տվել, որ գյուղը ոչ թե Խոնածախ, այլ Խանածախ ձեւով **Շարունակությունը՝ էջ 26**



# ՆԵՐՍԵՍ ՄՈԿԱՅԻ

## ՆԵՐԲՈՂԵԱՆ ԳՈՎԵՍՏԻ ՉՈՐԵՑՈՒՆՑ ԱՐԱՆՅՆ, ՈՐՔ ԵՂԵՆ ՍԿԻԶԲԸՆ ԱՆԱՊԱՏԻ ԿԱՐԳԻԼ ՅԱԶԳՍ ՄԵՐ

**Օ**րինեալ րէր Յիսուս փրկիչ՝  
Նորոգողն ազգի մարդկան,  
Որ միշտ զբարին կամի  
Եւ սպասէ մերոյս փրկութեան:  
Յայսմ յերնեալ ժամանակիս  
Յիշարակ արար նորոգման՝  
Բացեալ մեզ դուռն բարոյ  
Եւ եհեղ ձիւր ողորմութեան:  
Ով որ լուսանցոյց ունի  
Ճաճանչի այս մեծի ծագման,  
Կարէ զայս ի միւր առնուլ  
Ի իմանալ պարզեւ փրկական:  
Ականջ ունողացոյ ասեմ,  
Ունկն դիք բանիս միաբան,  
Լսէք փափագող լերուք,  
Ծարաւի բաժակիս արբման,  
Ձի սիրոյ սեղան կազմեմ  
Եւ կոչեմ զձեզ ի խրախարան,  
Կայթելով ծափս հարէք  
Ի լսել զճառս երանական:  
Ձի թէ մեք յերնեալ գրաք  
Եւ չեղաք արժան գովութեան,  
Սակայն մերայինքս եղեն  
Պարծանաց րէրի եւ կայան:  
Ատրանօր պարմել կամիմ  
Ձեղելոցս, որ մեզ դիպեցան,  
Թէպէտ վաղափոխ եղեալ  
Պարահարք իմն երեսցան:  
Ձի հայրն վերին գթած  
Ի խնդիր ել րանս Արաման,  
Եգիր զմեզ անկեալ յորսայս  
Ի ծուղակ չարին յանդիման:  
Ձգեալ ըզրատարակ բազկին  
Ձեղջերասս մեր թշուառական,  
Ձեռն երուր կանգնեաց զմեզ  
Գործմանէս, որ յերկարեցան:  
Սակաւ մի հոգի առաք  
Ի խնամոցս այս արարչական,  
Որպէս Պերրոսին եղև  
Ի ծովուն այլերծութեան:

Շահ Աբաս պարսից արքայն,  
Որ փրեաց րանս Արեւելեան,  
Ընկրեաց զգունդ արեաց պարսից,  
Օսմանին եկաց յանդիման:  
Մինն ի յընկրեոց դասուցն  
Երեսալ բրիստոսադան,  
Այր հրգօր, քաջամարտիկ,  
Ճակարուն բազմաց այտոյեան:  
Ընդ որ հաւանեալ արքայն  
Եւ գովեաց բազմաց յանդիման,  
Ապա ակն աճեր սիրով  
Միամիտ նորայն բաջութեան:  
Կացոյց զնա իշխան երկրի՝  
Հանեալ ի պարսի մեծութեան,  
Մեծարգոյ փառօք պարտեաց  
Եւ կոչեաց զնա իւր սիրական:  
Հախնազար հայրըն նորս  
Յորջորջեալ զնա սեռական,  
Հայկազն անուաներ զնա՝  
Նմանիլ Հայկազնին Տիգրան,  
Որ յունաց յաղթող գրաւ  
Եւ սկիւթացոց հիւսիսական,  
Որոյ ի դիմի հարաւ  
Քուրդըն մեծ՝ վիշապ Աժդահան:  
Սակայն սնակուշրն եհար  
Ջգեղարդն ընդ լեռոյակողմանն,  
Ջլեարդն եւ զթօք նորս  
Գեղարդեանքն ի փորոյն եհան:  
Մովսէս Քերթազն պարմէ  
Եւ գովէ զնա յոյժ զանազան,  
Ջձն եւ գրիպ կերպիւն,  
Ջբախարն մեծ ընդ զօրեղութեան:  
Մոյն սա անպակաս կերպիս  
Եւ ձեռովն իւր արքունական,  
Յաւել քան զնա ի փառս  
Հասարով սուրբ Երրորդութեան:  
Պերճ, հսկայաձեւ մարմնով  
Եւ փոքն վայելչական,  
Իսկ փիպ պարկերին գեղոյ՝  
Շնորհատր եւ դիւցազնական:  
Կորովի աղեղնատր,  
Քամանդար անսխալական,  
Ընդ մէջ իւր աճեալ սուսեր  
Ջերկասարին եւ զթօրն կորան:  
Ջվահանն պղղրնձապար՝  
Աջողակ ընդ ձախոյ կրանն,  
Հարթ համակ նկարակերպ՝  
Նպարակ նեփից ուժգնական:  
Ջրախարն յաջոյ ձեռին ունէր,  
Նիշ՝ գուշակ ինքնիշխանութեան,  
Յահեկէն կախեալ կրան՝  
Կորցատր ՚ի ինքն զառնիշխան:  
Հասակն գրահատրեալ,  
Մաղաարք պտակ գագայթան,  
Մաղաարք յերկրքին կողմանց  
Փքնայից ծաղկեալ զանազան:  
Ի շահարակել զիւուցն  
Ահրնկէց լինէր նա մարդկան  
Եւ ի խիզախելն ուժգին  
Բեկանէր նա զիւր դիմական:  
Յարշաւելն երիվարին՝  
Կրթածու եւ վարժողական,  
Դափր հարանէլ դաշրին,  
Դողացուցանէր զամենայն:

Դասք հրագէն հեղեակաց  
Առաջի գեղակ ընթանան,  
Ջգուշութեամբ մեծաւ սպասն  
Հրամանին յոյժ խորհրդական:  
Իսկ յարիւթին անձինն  
Անբարակ ի յորդիս մարդկան  
Եւ անհամեմար խոհեմ  
Ի շարժել շրթանցն յարկանան:  
ճարտասան, արագախօս,  
Անթարթափ յարարերութեան  
Եւ բաղխոհական ոճով  
Բարբառէր յարբայից դիւան:  
Իսկ ներքին մասամբ հոգոյն  
Երկիւղած ու զգատական,  
Խոնարհ էր նա հեզ բարուք,  
Եվ սիրով աստուածպաշտութեան:  
Անապարհ սին լինէր  
Եւ գրգէր զթով հայրական,  
Մինչ յիշխանութեան միջին  
Ջանք դէր անապարական:  
Յայսմ քանակեալ աւուրց  
Յայրենեցաւ բարոցն ընկրութեան՝  
Պօղոս վարդապետն արի,  
Ջարագովըն ճշմարտութեան:  
Հոմանուն առաքելոյն,  
Համարուեալ նոյն բարոգութեան,  
Փողելով հրաբարակէր,  
Յուշ առնէր զբանն արթնական:  
Կարծրագոյն վիմօք հասարեալ  
Ջբուն հոգոյ հաւարոյ հիման,  
Ջգուշութեամբ փորեալ ի խոր  
Լսար բանիցն փերունական:  
Իջին անձրեաց հեղեղք,  
Փորձութիւնք ի յորոց մարդկան,  
Ի Վասպուրական երկրին,  
Մոկաց րանս եւ ի Քուրդսարան:  
Կործանել ոչ կարացին զնա  
Ի յուսոյն իւրոյ բաջութեան,  
Ճշմարիտ քանիս գործեաց  
Ի յայգոջն րէրունական:  
Ի փարաշխարհիկ լինելն,  
Ի գաւառն, որ կոչի Գոթթան,  
Դարձեալ անդ զարթեալ հին չարն  
Եւ յարոյց կրկին հալածան:  
Առաջնորդք ՚ի եպիսկոպոսք,  
Արեղայք ՚ի եկեղեցական,  
Հակառակ կացին նմա  
Եւ ընդդէմ նմին զինեցան:  
Վասն այն զնոսս սրեաց  
Կործանիչն ազգի մարդկան,  
Ջի յանձնէ աւերեսցի  
Տուն մերոյս առաջնորդական:  
Միաբեակ թշնամի,  
Հասարար եւ համանման,  
Ջի պատակարեցին մարդիկը  
Ի յարուսցեն հերձուած չարութեան  
Ճգունս բազում կրեաց  
Ի հայոս ՚ի ի փաճկի դիւան,  
Վկայաց բազում րէրիս  
Տեսարն մերոյ մարդեղութեան:  
Վարժող էր նա անձանձիր,  
Թէ լինէր որ փափագ ուսման,  
Թէ չէ՝ ինքն-ինքեան ասէր

Շարունակութիւնը՝ էջ 28





# Հոջանց անապատ

ՄԵԼԻՔԻԹՅԱՆ ԵՃԱՆԱԿԱՆ ՍԽԻՊԱՆՆԵՐՆԵՐԸ



**Հ**ոջանց անապատը հիմնել են Տեր Կիրակոսն ու Թումա եպիսկոպոսը, մինչև վերջերս տեղը հայտնի չէր: Անապատն էլ պատահաբար գտան մի խոր անտառապատ կիրճում: Ուղղաձիգ ժայռեղեն պատը (մոտ 50-60 մետր բարձրությամբ) հարուստ է խոռոչներով, որոնք ժամանակին մշակվել են դարձել են բնակելի քարայրներ (երեւի՝ ճգնարաններ): Եվ սրանց կողքին հինգ խոռոչ կա, որոնցից երկուսը՝ ավելի բարձր: Քարայրներից մեկով շատ հեշտությամբ կարելի է ներս մտնել: Առաջին անգամ մտնողն սկզբում չի հավատում տեսածին. դիմացը եկեղեցու Սուրբ խորանն է՝ կամարակապ ժայռափոր՝ աջում բարձր մի անցքից արեւի ճառագայթներն են ընկնում

քանդված բեմի վրա: Չախ պատի վրա ներս ընկած կամարակապ փոսեր կան՝ խորաններն են: Կամարակապ տանիքը, ավանդատները (բավականին մեծ ու ժայռի մեջ փորված) եւ այլն խոսում են այն մասին, որ Աստծո այս տունը երկար տարիների շինարարական աշխատանքի արդյունք է: Թե՛ եկեղեցին, թե՛ դիրքը (անտառապատ խոր ուղղաձիգ ժայռով կիրճ՝ բնակավայրից 2-3 կմ հեռու), թե՛ կողքի մյուս քարայրները հուշում են, որ ուխտատեղի է եղել, եւ կարելի է վստահ ասել՝ հենց Դավրիժեցու հիշատակած Հոջանցի անապատն է: Կարելի է նաեւ ենթադրել, որ ավելի հինում էլ այստեղ ուխտավայր է եղել, եւ Կիրակոս ու Թումա հոգեւորականներն այն վերաբացել են:




Հոջանց գյուղի եկեղեցին

# Ծիծեռնավանք




**Ծիծեռնավանքի մասին բազում ավանդազրույցներից մեկը ներկայացնում է Երվանդ Լալայանը «Ազգագրական Հանդեսում» (1898-N2): Սիսականի ավանդազրույցը.** «Հոչաս գիւղի մելիք Թումանը շարունակ նեղացնելիս է եղել նոյն գիւղի քահանային, այնպէս որ վերջինս, նրանից ազատուելու համար՝ մի անձնաբերութիւն է գրել գցել նրա սենեակը ու ինքը փախել, գլուխն ազատել: Անձնաբերութիւնը զօրութեամբ, մելիքը շուտով կորցրել է որդիները, կինը եւ ամբողջ հարստութիւնը: Վերջապէս հասկանալով, որ այդ բոլոր թշուառութիւնները քահանայի անձնաբերութեան առաջացել, գնում է նրան որոնելու, որպէս զի թողութիւն խնդրէ: Անցնում է շատ քաղաքներ, գալիս հասնում Հռոմ, որտեղ իմանում է, որ քահանան վախճանուել է: Յուսահատուած մնում է նա Հռոմի մի վանքում իբր լուսարար եւ միշտ աղօթում իւր հոգու փրկութեան համար: Երեք տարուայ ճգնութիւնից յետոյ ձգում է իւր վերայ տասներկու շղթայ եւ ասում. «Եթէ ազատուած եմ անձնաբերութեան թող այս շղթաները իրենք իրենց արձակուին»: Նոյն գիշերը, երազում երեւում են նրան անհիծող քահանան Քրիստոսի հետ եւ ասում. «Մելիք, հրամանան Քրիստոսի արձակեմ գրեզ», եւ իսկոյն շղթաներն արձակուում են:

Սի ժամանակ անցնելուց յետոյ, մի օր այս մելիքը կծում է Պետրոս առաքելի ճկոյթ (ծիծեռնը) մատից եւ պահում բերանում: Իսկոյն սրբերի բոլոր պատկերները վայր են ընկնում: Գալիս են քահանաները եւ նկատելով մելիքի գողութիւնը՝ կանխում են մասունքը հանել նրա բերանից եւ իրեն էլ սպանել, սակայն սեղանից



մի ձայն է լսում, որ ասում է, թէ մի մերձեցաք մելիքին: Ուստի եւ քահանաները ոչ մի վնաս չեն հասցնում մելիքին եւ սա անվտանգ գալիս հասնում է այժմեան Ծիծեռնավանքի տեղը: Այստեղ վաղ ժամանակներից մի շլորի ծառ է լինում, որ շրջապատող բոլոր ժողովուրդներից պաշտուելիս է եղել, մինչեւ անգամ եղջերուները իրենք իրենց գալիս եւ զոհուելիս են եղել նրան: Այս այս ծառի մօտ մելիքը շինել է այժմեան տաճարը եւ ս. Պետրոսի ճկոյթը (ծիծեռնը) նրա մէջ ամփոփել. այս պատճառով վանքը կոչուել է Ծիծեռնավանք, այսինքն ճկոյթի վանք:

Ասում են, թէ այս մասունքը այժմ էլ մնում է ձախ աւանդատան դռան առաջ գտնուած գերեզմանում:




# Խանածախի անապատ

## աշխարհի հրաշալիքներից մեկը



«Սյունյաց երկրի» ստեղծագործական խումբը Խանածախի անապատ (Անապատի ծոր) այցելեց 2013թ. մարտի 3-ին: Ցավոք, անապատի եկեղեցին, որ ժայռափոր է, այլևս նկատելի չէ, քանզի մուտքը մնացել է ահռելի քարաբեկորի ու հողաշերտի տակ, եւ հնարավոր չէ ներս մտնել: Տեղացիները պատմում են, որ մերձակա ժայռի փլուզումը տեղի է ունեցել 2012թ. օգոստոսի 11-ին՝ երկրաշարժի հետեւանքով: Բարեբախտաբար, 2011թ. աշնանը եկեղեցու մուտքը եւ ներսը լուսանկարվել էին Ռեդիկ Չայրապետյանի, Շահեն Չեյթունցյանի եւ պարսկահայ մի լուսանկարչի կողմից: Լու-




սանկարների օրինակն ամիսներ առաջ հայտնվել էր մեր թերթի խմբագրությունում, ուստի եւ ներկայացնում ենք հողի տակ մնացած եկեղեցու որոշ դրվագներ:

Օգտվելով առիթից՝ կոչ ենք անում տեղական իշխանություններին, նշանավոր խանածախցիներին ու Սյունիքի պատմամշակութային արժեքների պահպանության գործով շահագրգիռ մարդկանց՝ փրկելու եկեղեցին վերջնական անհայտացումից: Եկեղեցու մուտքը քարաբեկորից եւ հողի շերտից չմաքրելու դեպքում, անտարակույս, տարիներ անց ոչ ոք չի իմանա, որ անապատի վերին ծորի հատվածի անենամեծ քարանձավի ստորոտին էր գտնվում Խանածախի անապատի ժայռափոր եկեղեցին:


ՄԵԼԻՔՈՒԹՅԱՆ ԵՃԱՆԿՈՒՄԻ ՍԻՆԿՏՐԱԿՆԵՐԻ

ՀԱՅԴԱՆԻ ԵՐԵՄՆԻ

Ու որպես՞ն  
փնտրենք քեզ  
պես աշխարհ...



ջրի ազդեցությամբ զանազան ձևեր են ստացել, մանաւանդ նշանաւոր են մի քանիսը, կոնուսի ձեւով: Այս քերթերի մէջ եւս կան բազմաթիւ մեծ եւ փոքր քարատակեր, նախկին բնակարաններ: Ձորի բերանում, ուր երեք կողմից բոլորում են լեռներ՝ քարէ պարիսպ է քաշուած եւ մի մեծ դարպաս թողնուած: Նոյնպիսի մի պարիսպ էլ ձգուած է փոքր ինչ բարձր, լեռների ընդհարման կէտում, շրջափակելով մի փոքրիկ տարածութիւն, որ ձորից բաւական բարձր է: Այստեղ գտնուում է մի մեծ, 32մ. (15 ս.) երկարութեան, 21,3մ. (10 ս.) լայնութեան եւ մօտ 27, 7 մ. (13 ս.) բարձրութեան քարայր, որի ծորահայեաց կողմը բոլորովին բաց է: Սա կարծես մի բնական սրահ լինի, որից դէպի բոլոր երեք կողմերը բացուած են մեծ եւ փոքր արհեստական քարատակեր: Սրան կից է նաեւ մի ուրիշ, մեծ այր, որ ծառայելիս է եղել որպէս եկեղեցի: Սրա երկարութիւնն է 14,2 մ. (6 ս. 2 արշ.) լայնութիւնը 9,2մ. (4ս. 1 արշ.) եւ բարձրութիւնը՝ մօտ 12,8 մ. (6 սաժէն): Սա ամբողջովին քերթի մէջ է եւ միայն ծորահայեաց կողմից քարէ պատ է շինուած: Եկեղեցին ունի մի սեղան, երկու փոքրիկ սրբատնով, եւ երկու աւանդատուն, որոնցից հարաւայինի մէջ փորուած է աւազան: Իսկ միւսը ծառայում է որպէս գաւիթ: Եկեղեցուց բարձր կան ուրիշ քարատակեր եւս, որոնք հաւանօրէն միմեանց հետ հաղորդակցուած են, որովհետեւ դրսից շատ բարձր եւ բոլորովին անմատչելի են:



Գիւղի կենտրոնում գտնուում է մի հնաշէն, հասարակ եկեղեցի, իսկ նրանից բարձր, երկու փոքրիկ մատուռ եւ մի հին գերեզմանատուն, ուր նշանաւոր է Մելիք Յայկազի գերեզմանը:

Տները դարադամներ են, սակայն կան նաեւ քարատակեր, որոնցից մի քանիսը հին են, իսկ միւսները նոր են փորուած: Հին քարատակերը գլխաւորապէս ծառայում են որպէս խոտանոց եւ գոմ:

Բնակիչներն առաւելապէս Սուլթանքենդից գաղթած հայ լուսաւորչականներ եւ շիի քրդեր են. հայերը 188 տուն են, 834 ար. 631 իգ. ընդամենը՝ 1465 հոգի: Քրդերը՝ 50 տուն. 135 ար. 117 իգ. ընդամենը՝ 252 հոգի: Պարապմունքը նոյն է: Գիւղում կայ չորս խանութ:

ԵՐՎԱՆԻ ԼԱՍՏԱՆ  
«Ազգագրական Դանդէա», 1898-ՈԶ



Ազգագրություն

# 1895-1897 թվականներ...

Խ

անածախը գտնուում է Գորիսից դէպի հիւսիս, մօտ 25 քիլոմետր հեռաւորութեամբ: Իսկ սրա մօտ, հազիւ 2 քիլոմետր հեռու ձգուած է մի խոր ձոր, որի միջով հոսում է մի փոքրիկ առուակ: Այս ձորի երկու կողմում կան կարմիր եւ սպիտակ աւազախառն հողից կազմուած քերթեր, որոնք

ՀԱՍԱՐԻ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՎԱՆԱՎՈՐԵԼ ԵՆ ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՍԵՅՐԱՆ ՕՅԱՆՅԱՆԸ ԵՎ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՍՈՒՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

**Այունյաց երկիր**  
S U N I A C Y E R K I R . A M  
Գլխավոր խմբագիր՝  
**ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:  
Հեռախոս՝ (0285) 5 25 63,  
(091) 45 90 47,  
(077) 06 28 02:  
Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru  
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՐՎԱԶԳ - ՇԱՆՈՒԹՅՈՒՄ» բաժնու սպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկիր» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: